

ՄԱՌՅՐԻԿ

հսլս

مارزیک

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية المهومتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հՁ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 10 (304) VOL. XXVI N° 10

السنة السادسة والعشرون العدد العاشر



89 ՏԱՐԻ ԵՏՔ՝

99 ՄԱՍՆԱՃԻԻՂ, 26 ՀԱԶԱՐ ԱՆԴԱՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՐԴ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻԻ

Ողջո՞յն հայրապետական Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն:

Ողջո՞յն սիրոյ ու օրհնութեան Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքին:

Ողջո՞յն հայրական անոր, որ մեր ժողովուրդի կեանքէն ներս տասնամեակներ շարունակ դարձաւ հոգեւոր ու բարոյական վեհ արժէքներու, ազգային սրբազան իտեալներու ու մեր ժողովուրդի դարաւոր երազներու մարմնացումը:

Այսպէ՛ս եղաւ Հ.Մ.Ը.Մ.ը իր հաւատքով ու հաւատամքով, իր ծառայութեամբ ու վկայութեամբ մեր ժողովուրդի հաւաքական կեանքէն ներս՝ Սփիւռքի հեռաւոր գաղութներէն մինչե՛ւ Հայաստան:

Հայկական Ցեղասպանութենէն ճողոպրած հայ ժողովուրդի գաւակներուն համար Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ հայուն ինքնահաստատման ու ինքնակազմակերպման ամենէն զօրեղ առանցքներէն մէկը:

Անհայրենիք ու անտուն մեր գաւակներուն համար Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ հայկական տոհմիկ աւանդութիւններով լեցուն ջերմ օժախ ու փոքր Հայաստան՝ հայու հարազատ ոգիով ու վեհ գաղափարականով օծուն:

Հայոց պատմութենէն ու հայրենիքէն, եկեղեցիէն ու դպրոցէն ու մեր ժողովուրդի ամենէն զուլալ աղբիւրներէն Հ.Մ.Ը.Մ.ը քաղեց իր գործին ուղեգիծը, ընտրեց իր կեանքի լուսեղ ճամբան, այլ խօսքով՝ իր լինելութիւնը:

Ահա թէ ինչու Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդին համար սոսկ կառոյց չեղաւ, այլ դարձաւ առաքելութիւն. սոսկ մարմնակրթական միութիւն չեղաւ, այլ դարձաւ հոգեւոր, բարոյական ու ազգային կազմաւորումի վառ հնոց:

Ա՛յս խոր հաւատքով ու վառ տեսիլքով զինուած Հ.Մ.Ը.Մ.ը վճռորոշ դեր կատարեց հայապահպանման մեր հաւաքական պայքարին մէջ, Սփիւռքի տարածքին: Եւ այսօր նո՞յն հաւատքով ու տեսիլքով գօտեպնդուած ան վճռական դեր կը կատարէ նաեւ հայրենաշինութեան նուիրական առաքելութեան մէջ՝ Հայաստանի մէջ թէ Հայաստանէն դուրս:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ գնահատողը ու քաջալերողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ին ու պիտի մնայ այդպէս: Արդարեւ, անձերէն ու կառոյցներէն անդին համազգային արժէքներու ու իտեալներու լծուած ռեւէ՛ միութիւն, կողմնակի ու ժամանակաւոր շահերէն անդին գերագոյն ու յաւերժական արժէքներու ու իտեալներու լծուած ռեւէ կառոյց միշտ արժանի եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարձր գնահատանքին ու ամուր զօրակցութեան:

Մեր սպասումն է, որ նոյն ա՛յս ոգիով, ա՛յս տեսիլքով ու հաւատքով Հ.Մ.Ը.Մ.ը շարունակէ հայակերտումի, ազգակերտումի ու հայրենակերտումի իր ճամբան՝ իր քայլերգին ճառագայթող պատգամը ու մարտահրաւիրը կեանքի, գործի ու պայքարի վերածելով՝

«Յառա՛ջ նահատակ ցեղի անմահներ,

.....
Յառա՛ջ անսասան, յառաջ անվեհեր,
Դէպի յաղթանակ...»:



Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ԹԻՒՆ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مجله رياضیه شهريه تصدیرها جمعیه الهومنتمن الرياضی مارزیک



8

ԳՐԴ ՊԱՏԳԱՍԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- Խմբագրական 2
- Բացումը 3
- Հաղորդագրություն 4
- ճանչնանք 6
- Օրինութեան Խօսք 7
- Պատգամաւորական ժողովը 8
- 99 Մասնաճիւղերով 14
- ճակերոյթ-Պարահանդէսը 19
- Պատգամներ 20
- Տպաւորութիւններ 25



30



36

ԲԱԺԻՆՆԵՐ

- Յուշեր 27
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 30
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ
 «Մարզիկ»ի այս թիւը կը հրատարակուի ազնիւ մեկենասութեամբ՝ հալէպահայ բարերար Լեւոն Զէքի տալեանի:

Մարզական ամսաթերթ
 Հրատարակուիւմը՝ Հ.Ս.Ը.Ս.Ի
 ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻՋ. ՏԱՐԻ, 2007, ԹԻՒ 10 (304)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՂԱՍ
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Սեւան Նազարեան, Վարուժան
 Սերոբեան, Պետրոս Հաճեան,
 Սալբի Լատոյեան եւ շրջաններու
 թղթակիցներ:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատաւաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Ս.Ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ԶՆԲԿԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐ

ՆՈՐ ՕՐԵՐ

Պատգամաւորական ժողովները ձեւական խանդավառութեան առիթներ չեն: Ծափի եւ ողջոյնի օրեր չեն:

Որքան ալ սիրենք խանդավառութիւնը եւ հաւատանք անոր մղիչ դերին՝ միութիւններու կեանքին մէջ, պէտք է ձգտինք իմաստ եւ արժէք որոնելու Պատգամաւորական ժողովէ ժողով երկարած գործունէութեան մէջ: Պէտք է փորձենք անցնող չորս տարիներէն դէպի ապագայ երկարող ծամբուն վրայ որոշ արժեւորումներ կատարել եւ ըստ այնմ շարունակել մեր երթը:

Յ.Ս.Ը.Ս.ի 9րդ Պատգամաւորական ժողովը այս իմաստով մեզ կը դնէ կարգ մը իրականութիւններու դիմաց: Այն որ՝

Յ.Ս.Ը.Ս., համահայկական կառոյցի վերածուելէ 33 տարի ետք, այսօր, իսկապէս դարձած է ոսկի օղակ մը՝ հայ սրտերը իրարու կապող: Իր Պատգամաւորական ժողովի ներկայացուցչական պատկերին համաձայն, Յ.Ս.Ը.Ս. աշխարհի 99 քաղաքներու հայութիւնը իրարու հաղորդակից դարձնող կամուրջ մըն է այսօր, Սփիւռքը Հայրենիքին միացնող ուժ մը, որ իր անդամներուն կու տայ մէկ եւ ամբողջական հայութեան պատկանելիութեան գիտակցութիւնը: Իսկ մեր օրերուն կա՞յ աւելի մեծ անհրաժեշտութիւն՝ քան հայութեան ցրուած ուժերը քով-քովի բերելու եւ աշխատելու հրամայականը: Ազգը պէտք ունի իր բոլոր ուժերուն: Յ.Ս.Ը.Ս. բոլորը քով-քովի բերող մարմնակրթական ընդհանուր միութիւնն է, որ առաւելագոյն յաջողութիւններ արձանագրելու հաւատքն ու վստահութիւնը ունի եւ այդ հաւատքով ու վստահութեամբ կը քալէ՝ յաղթահարելով ժամանակի բոլոր դժուարութիւնները:

Յ.Ս.Ը.Ս. այսօր հայ կեանքին մէջ իր պատուաւոր տեղը ունի ո՛չ միայն իր 26 հազար անդամներու պատկառելի թիւով, կազմակերպական մեծ կառոյցով, նիւթական եւ բարոյական տարածուն գործունէութեամբ, այլեւ՝ մարմնակրթական

գործունէութեան ընդմէջէն տարած իր հայանուէ՛ր աշխատանքներով: Աշխատանքներ, որոնք կենսունակ եւ առողջ կը պահեն հայ նոր սերունդները, զանոնք կը մեծցնեն ազգային արժանապատուութեան զգացումով եւ մարմնակրթութեան գործը կը դարձնեն նուիրական առաքելութիւն՝ ծառայելու համար մեր հաւաքական կեանքին ամրապնդման:

Այդ կենսունակութեան պատիւէն բաժին մըն ալ, անշուշտ, կ'երթայ նոյնիմքն Յ.Ս.Ը.Ս.ին, որուն Պատգամաւորական ժողովին երիտասարդ կազմը լաւագոյն փաստը կու տայ այս երեւոյթին: Արդարեւ, միութիւն մը երբ 89 տարեկան է եւ զայն բաղկացնող տարրերը այդ տարիքին շուրջ կը գտնուին, կը նշանակէ թէ այդ միութիւնը հոգեվարքի մէջ է եւ ժառանգորդ չունի՝ գործը շարունակելու համար: Մինչդէռ այդպէս չէ Յ.Ս.Ը.Ս.ի պարագան, ուր տեւաբար նորեր կը հասնին պատասխանատուութեան տարբեր մակարդակներու վրայ եւ միութիւնը կը յաջողի պահել երիտասարդական իր ինքնուրոյն դիմագիծը:

Այսօր, զոհաբերութեան եւ նուիրումի բազմաթիւ օրինակներ կը պարզէ շրջանէ շրջան Յ.Ս.Ը.Ս.ի մասնաճիւղերուն գործունէութիւնը: Կարելի չէ ամբողջական պատկերը տալ բազմահազար այն հայորդիներուն, որոնք գիտակից նախանձախնդրութեամբ եւ պատասխանատուութեան խոր զգացումով, տուն-տեղ ձգած՝ ժողովէ ժողով կը վազվզեն, ձեռնարկ կը յաջողցնեն եւ ազգային կարիք մը կը հոգան, որպէսզի միութիւնը զօրանայ իբրեւ կառոյց, իբրեւ դերակատարութիւն եւ առաքելութիւն:

Այսպէս, նորերը կ'ընթանան հիներու ծամբով, բայց նորանոր դժուարութիւններով: Կեանքի օրէնքն է այդ՝ նոր օրեր, նոր դժուարութիւններ:

Նո՛ր օրեր, նո՛ր պայքար: Իսկ՝
Յ.Ս.Ը.Ս.ի համար, նո՛ր պայքար անպայման կը նշանակէ նո՛ր յաղթանակ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՅՈՒՄԸ

Պատգամաւորական ժողովները Հ.Մ.Ը.Մ.Ի հայանուէր առաքելութեան ծամբուն վրայ կարեւոր կանգառներ են, ուր ամէն անգամ միութեան մեծ ընտանիքին ներկայացուցիչները կանգ կ'առնեն՝ արժեւորելու համար իրենց կտրած ուղին եւ ծշդելու համար յառաջիկայի քայլերը: Նման կանգառ մըն ալ, իններո՞րդը, համագաղութային կառոյցի ստեղծումէն ի վեր, պատմութեան արձանագրուեցաւ 19 Սեպտեմբեր 2007ին, անկախ Հայաստանի մէջ Զրդ Պատգամաւորական ժողովի հանդիսաւոր բացումով:



Բացման պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ 19 Սեպտեմբերի յետմիջօրէի ժամը 5ին, Ծաղկաձորի «Մալթի Ռէսթ Հաուս» պանդոկին մէջ, ներկայութեամբ միութեան 10 Շրջանային եւ 16 Մեկուսի շրջանները ներկայացնող 72 պատգամաւորներու եւ հրաւիրեալներու: Պաշտօնական հիւրերու շարքին էին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Անուշաւան Եպս. Ժամկոչեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Ալլախրիմ Աճէմեան, Համագաղայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեան եւ բազմաթիւ հիւրեր:

Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգներու ունկնդրութեան էտք, հանդիսութեան բացումը կատարեց «Մարզիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական ժողովներու շարքին կ'աւելնայ նոր օղակ մը՝ իններորդ օղակը, Պատգամաւորական Զրդ ժողովը, որ կը գումարուի անկախ հայրենիքի երկնակամարին տակ, իր վրայ սեւեռած ո՛չ միայն միութեան աշխարհասփիւռ 99 մասնաճիւղերու բազմահազար անդամներուն հայեացքները, այլեւ՝ համայն հայութեան ուշադրութիւնը:

Իր խօսքին մէջ եղբ. Աւագեան յայտնեց, որ չորս տարին անգամ մը գումարուող Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական ժողովները եղած են ու կը մնան մարմնակրթական այս մեծ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Ս.Ը.Մ.ի Պատգամաւորական 9րդ Ընդհանուր ժողովէն ընտրուած եւ քառամեայ շրջանի համար գործելու կոչուած Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, յետ խորհրդակցութեան, իր դիւանը կազմեց հետեւեալ եղբայրներէն.-

Ատենապետ՝ եղբ. Գրիգորիս Պողարեան (Լիբանան)

Փոխ ատենապետ՝ եղբ. Գօգօ Պալեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներ)

Ատենադպիր՝ եղբ. Կարպիս Գապասագալեան (Լիբանան)

Գանձապահ՝ եղբ. Միհրան Շիմշիրեան (Լիբանան)

Խորհրդականներ՝ եղբայրներ Յարութիւն Յարութիւնեան (Հայաստան), Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա), Վահրամ Դանիէլեան (Արեւելեան Միացեալ Նահանգներ), Արմէն Կէտիկեան (Գանատա) եւ Գարլոս Սէֆէրեան (Հարաւային Ամերիկա):

4 Յոկտեմբեր 2007

Հ.Ս.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Ս.Ը.Մ.Ի ՆՈՐԸՆՏԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԸ Կ'ԱՅՅԵԼԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

30 Յոկտեմբեր 2007ին, Հ.Ս.Ը.Մ.ի նորընտիր Կեդրոնական Վարչութեան դիւանի անդամ եղբայրներ՝ Գրիգորիս Պողարեան, Կարպիս Գապասագալեան եւ Միհրան Շիմշիրեան այցելեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի մայրավանքին մէջ: Եղբայրներուն ընկերակցեցան ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Սկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան եւ Պատրիկ Կիլպէնկեան: Եղբայրները Արամ Ա. Կաթողիկոսին ներկայացուցին 9րդ Պատգամաւորական ժողովին արդիւնքները եւ միութեան տարած գործունէութեան ընդհանուր պատկերը՝ զանազան զաղութներու մէջ:



Արամ Ա. Կաթողիկոս ողջունեց նոր սերունդի դաստիարակութեան մէջ կարեւոր ներդրում ունեցող Հ.Ս.Ը.Մ.ի աշխատանքը: Ան այս առիթով անգամ մը եւս զնահատեց երիտասարդական կազմակերպութիւններու կարեւոր նպաստը՝ նոր սերունդի ազգային նկարագրի կերտման մէջ: Արամ Ա. Կաթողիկոս ազգային արժէքներու շուրջ նոր սերունդը համախմբելու իւրաքանչիւր աշխատանք նկատեց կենսական թէ՛ զաղութներու առողջ ու կենսունակ պահպանման եւ թէ՛ հայեցի կրթութեան իւրայատուկ յատկանիշները արժեւորելու համար:

միութեան համար տեւական ուժ ներարկող, անոր ներքին առողջութեան, կենսունակութեան, գիտակից զոհողութեան եւ յառաջդիմութեան մղում տուող կարեւոր հանգրուաններ:

Ապա, յաջորդաբար ողջոյնի խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ.) ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեան եւ Համագլխի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետը յաջողութիւն մաղթեց ժողովի աշխատանքներուն եւ նշեց, թէ պատահական չէ Պատգամաւորական ժողովին գումարումը Հայաստանի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստան վերադարձած է 18 տարիէ ի վեր: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը արդէն 18 տարեկան է եւ այս՝ մեր բոլորին աշխատանքներուն շնորհիւ: Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեան յայտնեց, որ Պատգամաւորական ժողովները հաշտութեան եւ հաշտեցողութեան ժողովներ ըլլալու կողքին, նաեւ իրարու ծանօթանալու եւ իրարու հետ յարաբերելու յարմար առիթներ են, ինչպէս նաեւ կը հանդիսանան հայութեան հաւաքական կեանքը յուզող հարցերու մասին միասնաբար խորհրդածելու, միասին ծրագրելու եւ գործակցելու հաւաքներ:

Իր կարգին, Համագլխի Կեդրոնական Վարչութեան ատենապետը դիտել տուաւ, որ մօտաւորապէս երեք տարի առաջ տեղի ունեցաւ ՀՕՄԻ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Համագլխի միացեալ խորհրդաժողովը, որուն ընթացքին կատարւեցան կարեւոր խորհրդածութիւններ: Այդ խորհրդաժողովին միջնորոտը պէտք է տարածուի՝ ամրանալով մեր բոլոր միութենականներու մտքերուն մէջ, որպէսզի հայութեան կեանքին մէջ գրեթէ երկու տասնամեակ առաջ տեղի ունեցած հիմնական փոփոխութիւնները իրենց արտայայտութիւնը գտնեն յանձնառու անհատներու առօրեայ կեանքին մէջ, եւ որպէսզի անոնցմէ իւրաքանչիւրը վերածուի ճիշդ ուղղութիւնը ցոյց տուող փարոսի:

Հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Ան ըսաւ, որ «Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Թողովը ցարգ զուգարուած Պատգամաւորական Ժողովներուն մեծագոյնն է, չըջաններու եւ պատգամաւորներու մասնակցութեան իր թիւով, ինչ որ պերճախօս փաստը կու տայ նախորդ Պատգամաւորական Ժողովին կողմէ հռչակուած «Կազմակերպչական Քառամեակ»ի արդիւնաւէտութեան եւ յաջողութեան: Արդարեւ, առաջին անգամ ըլլալով Պատգամաւորական Ժողովին կը մասնակցին միութեան նորաստեղծ կամ վերաշխուժացող չըջաններէն Հունգարիան, Շուէտը, Կիպրոսը, Մարսէյը, Պաղտատը, Ամմանը եւ տակաւին ուրիշներ»:



Եղբ. Գառնիկ Սկրտիչեան «Արժանեաց» շքանշանի հաստատագիրներ կը յանձնէ եղբայրներ Միհրան Շիմշիրեանին եւ Մանուէլ Զալլաճեանին:

րենանուէր աշխատանքի»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց. «Սփիւռքի մէջ հայը հայ պահելու, իսկ Հայաստանի մէջ տիպար քաղաքացիներ կերտելու մեր առաքելութիւնը օրէ օր կը բախի նոր դժուարութիւններու եւ կ'ենթադրէ ուժերու մեծ լարում՝ նոր օրերու համապատասխան միջոցներով յաղթահարելու համար մեզի դէմ ցցուած բոլոր դժուարութիւնները, որպէսզի հայութիւնը չտկարանայ եւ Հայաստանը հզօր մնայ իր ապագայ սերունդներով: Այդ տեսլականով Հ.Մ.Ը.Մ. ճամբայ ելաւ 89 տարիներ առաջ, Հայաստանի Ա. անկախութեան հռչակման հետ: Նոյն տեսլականով, տարիներ շարունակ ան Սփիւռքի սերունդներուն աչքերը սեւեռեց դէպի հայրենիք՝ անպայման օր մը զայն անկախ տեսնելու ցանկութեամբ: Ու երբ ցանկութիւնը դարձաւ իրականութիւն, նոյն տեսլականը միութիւնը վերադարձուց Հայաստան եւ իբրեւ Հայաստանի Ազգային Սկաւտական Կազմակերպութիւն զայն լծեց հայ-

իւրենանուէր աշխատանքի»:

Իր խօսքին աւարտին, Կեդրոնական Վարչութեան ատենապետը ներկայացուց անակնկալ մը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով պարգևատրեց վաստակաւոր երկու Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ եղբայրներ Միհրան Շիմշիրեան (Պէյրութ) եւ Մանուէլ Զալլաճեան (Թորոնթօ): Պարգևատրեալ եղբայրները միջոցառման զգացուած՝ արտասանեցին շնորհակալութեան սրտի խօսքեր:

Եղբ. Զալլաճեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան՝ իրեն ընծայուած գնահատանքին համար: Ան ըսաւ, որ հայցի կրթութիւնը ամէնէն աւելի կը պարտի Հ.Մ.Ը.Մ.ին, որուն երկար տարիներ ծառայած է անշահախնդրօրէն: Ան նաեւ շեշտեց, որ իրեն տրուած շքանշանը կ'երթայ այն բոլոր եղբայրներուն, որոնց հետ գործակցելու բախտն ու պատիւը ունեցած է:

Այս առիթով եղբ. Զալլաճեան կոչ ուղղեց ծնողներուն իրենց զաւակները վստահելու Հ.Մ.Ը.Մ.ին, արձանագրելու անոր շարքերուն, որպէսզի հայօրէն մեծնան եւ իրենցմով հայութիւնը աւելի մեծնայ եւ հզօրանայ:

Շքանշանակիր երկրորդ եղբայրը՝ Միհրան Շիմշիրեան իր կարգին շնորհակալութիւն յայտնեց Կեդրոնական Վարչութեան եւ ըսաւ, որ հպարտութիւնը կրկնակի է, որովհետեւ շքանշանի տուչութիւնը կը կատարուի անկախ Հայաստանի հողին վրայ: «Այն Հայաստանին, որ մեր երազն ու իտէպան էր մեր մանկութեան, գործի մղիչ իմաստն էր մեր երիտասարդութեան եւ կենդանի գործի դաշան էր մեր հասուն տարիքին: Արդարեւ, նուիրեալ այս հողին վրայ մենք բացառիկ առիթը ունեցանք մասնակցելու համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու եւ սեմինարներու կազմակերպման: Մենք ու մեր գործակիցները ջանացինք Հ.Մ.Ը.Մ.ի Հայրե-



Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամներ: Նկարէն կը բացակայի եղբ. Յարութ Յարութիւնեան:

ՃԱՆՉՆԱՆՔ

«ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ

ԵՂՔ. ՄԱՆՈՒԼ ՅԱԼԼԱՃԵԱՆ



Եղբ. Մանուիլ Յալլաճեան ծնած է 1929ին, Յալէպ: Յ.Ս.Ը.Ս.ին անդամակցած է 1944ին, իբրեւ սկաուտ: Երկար տարիներ ան եղած է Յ.Ս.Ը.Ս.ի Յալէպի մասնաճիւղի վարչական: 1958ին ընտրուած է Սուրիոյ Ֆուսպուլի ֆետերասիոնի անդամ եւ 14 տարի Յ.Ս.Ը.Ս.ի ներկայացուցչութիւնը կատարած է ֆետերասիոնի մօտ: Ան կարելոր դեր ունեցած է Յալէպի «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան հողաշերտին զննան եւ Քեսապի բանակավայրի կալուածագրին ապահովման մէջ: 1990-1995 եղբ. Մանուիլ եղած է Յ.Ս.Ը.Ս.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ, 1992էն ետք՝ ատենապետի պաշտօնով: 1995-2003, երկու շրջան ան մաս կազմած է Յ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան:

Յ.Ս.Ը.Ս.ին իր երկարատեւ ծառայութիւններուն համար, եղբ. Յալլաճեան արժանացած է Յ.Ս.Ը.Ս.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան «Ծառայութեան» շքանշանին: 2000 թուականէն ի վեր ան հաստատուած է Թորոնթօ, Քանատա:

ԵՂՔ. ՄԻՅՐԱՆ ՇԻՍՇԻՐԵԱՆ

Եղբ. Միհրան Շիմշիրեան ծնած է 1942ին, Պէյրութ: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Դամասկոս, ուր Յ.Ս.Ը.Ս.ին անդամակցած է 1947ին, իբրեւ գայլիկ: 1963-1965 եղած է Դամասկոսի մասնաճիւղի վարչական: 1965էն սկսեալ ան մասնակցած է Յ.Ս.Ը.Ս.ի Մերձաւոր Արեւելքի գրեթէ բոլոր Շրջանային ժողովներուն: 1961ին եւ 1963ին մասնակցած է Աւստրիոյ եւ Յունաստանի մէջ տեղի ունեցած սկաուտական միջազգային ձեմպորիներու: 1965ին վերադարձած է Պէյրութ եւ, այնուհետեւ, մինչեւ 1974 Յ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի սկաուտական շարքերուն ծառայած է իբրեւ Աքելլայ, Շրջանային Աքելլայ, Շրջանային Սկաուտ. Խմբապետ եւ Շրջանային Ընդհանուր Խմբապետ:



1973-1992 եւ 1995-2002, 26 տարի շարունակ եղբ. Շիմշիրեան մաս կազմած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին եւ Լիբանանը ներկայացուցած է արաբական ու միջազգային բազմաթիւ համագումարներու՝ Լիպիա, Օման, Անգլիա, Սենեկալ, Մ. Նահանգներ:

Միաժամանակ, 1974-1976 ան մաս կազմած է Յ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, իսկ 1983-1999՝ Յ.Ս.Ը.Ս.ի յաջորդական չորս Կեդրոնական Վարչութիւններու: Այս միջոցին, միութեանական առաքելութեամբ ան գտնուած է Յ.Ս.Ը.Ս.ի կազմակերպական գրեթէ բոլոր շրջանները: Յայաստանի անկախացումէն ետք, սկաուտական միջազգային իր ծանօթութիւններուն բերումով ան կարելոր դեր ունեցած է Յ.Ս.Ը.Ս.-Յ.Ա.Ս.Կ.ի միջազգային սկաուտական շարժումի անդամակցութեան նախաքայլերուն մէջ:

2001ին եղբ. Շիմշիրեան արժանացած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի բարձրագոյն շքանշանին, իսկ 2006ին պարգեւատրուած է լիբանանեան պետութեան երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ:

նիք վերադարձը յաջողցնել: Յաջողեցանք: Պատմութիւնը վաղը իր վճիռը կու տայ», աւելցուց ան:

Իր խօսքը եզրափակելով, եղբ. Շիմշիրեան յիշեց Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին համար աշխատած, երկար տարիներու իր գործակիցներէն, Արցախեան պայքարի նահատակ եղբ. Վարդան Բախշեանը եւ Կեդրոնական Վարչութեան նահատակ ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանը՝ «Հ.Մ.Ը.Մ.ի արդի պատմութեան մեծ երախտաւորներէն մէկը, որուն շատ բան պարտական են միութիւնն ու համայն հայութիւնը»:

Այնուհետեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի խօսքը փոխանցեց Ալպէրթ Աճէմեան: Յանուն Հ.Յ.Դ. Բիւրոյին, ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Ցրդ Պատգամաւորական Ժողովին գումարումը Հայաստանի մէջ եւ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեծ դեր ունի նորահաս սերունդներուն ազգային բարձր գիտակցութիւն ջամբելու գործին մէջ:

Հ.Մ.Ը.Մ. 1974ին, իր Ա. Պատգամաւորական Ժողովին, կը հաշուէր 12 շրջան եւ 28 մասնաճիւղ, մինչդեռ այսօր ան ունի 26 շրջան եւ 99 մասնաճիւղ, ըսաւ ան՝ աւելցնելով, որ այդ մէկը փաստը կու տայ այս միութեան մեծ գործունէութեան եւ յառաջդիմութեան:

Նիկոլ Աղբալեանի մէկ խօսքը վկայակոչելով՝ Ալպէրթ Աճէմեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ. անցնող տասնամեակներուն դարձաւ տարագիր բովանդակ հայութեան մարմնակրթութեան մասնաբաժինը, տէրն ու ղեկավարը: Աւելին, ան հայ նորահաս սերունդներուն փոխանցեց ազգային գիտակցութիւն, մեր ուժի, մեր արժէքներու եւ նպատակներու խոր ըմբռնում:

Իր խօսքին մէջ Ալպէրթ Աճէմեան յայտնեց, որ հայ ժողովուրդը այսօր կը դիմադրուէ երկու հիմնական մարտահրաւէր. հայ ժողովուրդի ինքնութեան պահպանման հարցը եւ հայ ժողովուրդի միութեան, հայ ազգի՝ Սփիւռք-Հայաստան գործակցութեան ամրապնդման հարցը, եւ Հ.Մ.Ը.Մ. երկու պարագային ալ ունի կատարելիք կենսական ու անփոխարինելի դեր:

Ալպէրթ Աճէմեանի խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասազալեան

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Հ.Մ.Ը.Ս.Ի ՊԱՏՊԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԶՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելի հայրորդիք,

Ամենայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր ողջոյնն ենք բերում ամէնքիդ, որ ի մի էք խմբուել հայոց օրհնեալ սուրբ հողում անցկացնելու Հ.Մ.Ը.Ս.Ի Պատգամաւորական Զրդ ժողովը:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Հ.Մ.Ը.Ս.Ը նշանակալի ներդրում է ունեցել նոր սերնդի հայեցի դաստիարակութեան եւ նկարագրի կազմաւորման նուիրական գործում՝ նրանց ջանքերով հայրենասիրութեան ու եղբայրասիրութեան ոգի եւ ծառայութեան յանձնառութիւն:

Երիտասարդ սերնդի կրթութիւնը, նրանց դէպի հայակերտ ու հայրենաշէն գործերի առաջնորդելը, ինչպէս նաեւ նոր երագներով ու լաւատեսական յոյսերով զարգացած հասարակութիւն ստեղծելու առաքելութիւնը մեր ժողովրդի ուսերին ծանրացած ամենամեծ պարտաւորութիւններից են: Այս առումով, սիրելի հայրորդիք, Մայր Հայրենիքում զուսարուող Հ.Մ.Ը.Ս.Ի Պատգամաւորական ժողովը կարեւոր ձեռնարկում է, որը ձեզ պիտի փոխան-

ցի անհրաժեշտ ներշնչանքն ու իմաստութիւնը՝ նորանոր նուաճումներ արձանագրելու վճռականութեամբ լծուելու խանդավառ ծրագրումի:

Մաղթում ենք, որ Միածնի Իջման սրբազնասուրբ սեղանից ճառագող լոյսը եւ մեր սուրբ հայրերի օրհնութիւնն ու աղօթքը ձեզ հետ լինեն եւ առաջնորդեն ձեզ «յամենայն գործս առաքինութեան» եւ յաջողութեամբ պսակեն հայրենի մեր երկրի առաջընթացին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը նպատակաուղղուած ձեր իրագործումները:

Աղօթում ենք ձեր քաջառողջութեան համար եւ ամէնքիդ բերում Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնը: Այլեւ լիակատար յաջողութիւններ ենք մաղթում Հ.Մ.Ը.Ս.Ի Պատգամաւորական Զրդ ժողովի աշխատանքներին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը՝ ուղղուած ժողովին: Իր պատգամին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս յատկապէս կը շեշտէր, որ «Անհայրենիք ու անտուն մեր զաւակներուն համար Հ.Մ.Ը.Ս.Ը դարձաւ հայկական տոհմիկ աւանդութիւններով լեցուն ջերմ օճախ ու փոքր Հայաստան՝ հայր հարազատ ոգիով ու վեհ գաղափարներով օժտուն:

«Հայոց պատմութենէն ու հայրենիքէն, եկեղեցիէն ու դպրոցէն ու մեր ժողովուրդի ամէնէն՝ զուլալ աղբիւրներէն Հ.Մ.Ը.Ս.Ը քաղեց իր գործին ուղեգիրը, ընտրեց իր կեանքի լուսեղ ճամբան, այլ խօսքով՝ իր լինելութիւնը:

«Ահա թէ ինչու Հ.Մ.Ը.Ս.Ը մեր ժողովուրդին համար սոսկ կառոյց չեղաւ, այլ դարձաւ առաքելութիւն. սոսկ մարմնակրթական միութիւն չեղաւ, այլ դարձաւ հոգեւոր, բարոյական ու ազգային կազմաւորումի վառ հնոց:

«Այս խոր հաւատքով ու վառ տեսիլքով գինուած Հ.Մ.Ը.Ս.Ը վճռորոշ դեր կատարեց հայապահպանման մեր հաւաքական պայքարին մէջ, Սփիւռքի տարածքին: Եւ այսօր նո՛յն հաւատքով ու տեսիլքով գօտեպնդուած ան վճռական դեր կը կատարէ նաեւ հայրենաշինութեան նուիրական առաքելութեան մէջ՝ Հայաստանի մէջ թէ Հայաստանէն դուրս»:

Հուսկ, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի օրհնու-

թեան խօսքը ընթերցեց Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան բաժանմունքի պետ եւ Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Անուշաւան Եպս. Ժամկոչեան:

Օրհնութեան իր խօսքով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կ'ընդգծէր, որ «Երիտասարդ սերնդի կրթութիւնը, նրանց դէպի հայակերտ ու հայրենաշէն գործերի առաջնորդելը, ինչպէս նաեւ նոր երագներով ու լաւատեսական յոյսերով զարգացած հասարակութիւն ստեղծելու առաքելութիւնը մեր ժողովրդի ուսերին ծանրացած ամենամեծ պարտաւորութիւններից են: Այս առումով, Մայր Հայրենիքում զուսարուող Հ.Մ.Ը.Ս.Ի Պատգամաւորական ժողովը կարեւոր ձեռնարկում է, որը ձեզ պիտի փոխանցի անհրաժեշտ ներշնչանքն ու իմաստութիւնը՝ նորանոր նուաճումներ արձանագրելու վճռականութեամբ լծուելու խանդավառ ծրագրումի»:

Այնուհետեւ, հանդիսութիւնը վերջ գտաւ Անուշաւան Եպս. Ժամկոչեանի «Պահպանիչ»ով:

Յաջորդեց հիւրասիրութիւն, որմէ ետք Պատգամաւորական ժողովը անցաւ իր օրակարգի քննութեան:

Պատգամաւորական ժողովին լուսանկարները՝
Տիրան Շահինեանի:

99 ՄԱՄՆԱՃԻԻՂ ԵՒ 26 ՀԱՁԱՐ ԱՆԴԱՄ ՀԱՄԱԽՄԲՈՂ



Հ.Մ.Ը.Մ.Ի 997 ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԵԾԱԳՈՅՆԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.Ի 997 Պատգամաւորական Ժողովի բացման հանդիսութենէն ետք, Չորեքշաբթի, 19 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 7ին, Ծաղկաձորի «Մալթի Ռէսթ Հաուս» պանդոկի դահլիճին մէջ իր աշխատանքներուն սկսաւ չորս տարլի անգամ մը գումարուող միութեան գերագոյն ժողովը:

Պատգամաւորական Ժողովի Ա. նիստի ներկաներու շարքին էին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Ալլէքսիս Աճէմեան, Համագ-գայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, Իրանի Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեան եւ Հայաստանի կրթութեան փոխ նախարար եղբ. Բագրատ Եսայեան:

Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ատենապետ

եղբ. Գառնիկ Մկրտիչեան ժողովին սկիզբը ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայ լուռութեամբ յարգելու յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակը: Ապա, ներկաներուն բարի գալուստ մաղթելով, ան ուրախութեամբ յայտարարեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը տիրացած է «Փոսթ Եուրոպի» նամակաբաշխական ընկերութեան 2007ի սկաուտական լաւագոյն գործաթուղթի մրցանքին: Ան նաեւ աւելցուց, որ իբրեւ հպարտալի լուր, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եւ Հայաստանի կրթութեան փոխ նախարար եղբ. Բագրատ Եսայեան նոր վերադարձած է Մալթայէն, ուր ընտրուած է սկաուտական եւրոասիական բաժանմունքի նախագահ:

Եղբ. Մկրտիչեանի խօսքէն ետք, ժողովը կազմեց առժամեայ իր դիւանը: Առաջարկուեցան եւ միաձայնութեամբ առ-

Պատգամաւորական Ժողովին կը հետեւին Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Ալլէքսիս Աճէմեան, Համագգայինի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան, Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչ Հրաչ Զարիֆեան, Հայաստանի կրթութեան փոխ նախարար եղբ. Բագրատ Եսայեան եւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամներ:





Շրջանների պատգամաւորներու ներկայացուցիչներ եւ հիւրեր:

Ժամեայ դիւանի անդամ ընտրուեցան եղբայրներ Մոսիկ Թոփուզեան (Գանատա)՝ ատենապետ եւ Յակոբ Քէշիշեան (Լիբանան)՝ քարտուղար: Յաջորդեց լիազօրագիրներու ստուգումը:

Ժողովին օրինականութիւնը հաստատող լիազօրագիրներու քննութեան լոյսին տակ պարզուեցաւ հետեւեալ պատկերը.-

Ժողովին իրաւասու ձայնով մասնակցելու իրաւունք ունէին՝

10 Շրջանային Վարչութիւններէ 50 պատգամաւորներ, որոնք կը ներկայացնէին իրենց շրջաններու 78 մասնաճիւղերը:

16 Մեկուսի Վարչութիւններէ 22 պատգամաւորներ, որոնք կը ներկայացնէին իրենց շրջաններու 19 մասնաճիւղերը: Անյաղթահարելի դժուարութիւններու պատճառով կը բացակայէին միայն Մուսուլի (Իրաք) եւ Ջաւախքի շրջանները, իսկ չորս շրջաններ՝ Կիպրոս, Հունգարիա, Շուէտ եւ Մարսէյ կը մասնակցէին առաջին անգամ ըլլալով:

Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութիւնը ներկայացած էր լիազօր ներկայացուցիչով մը:

Պատգամաւորական Ժողովին կը մասնակցէին նաեւ ի պաշտօնէ եւ խորհրդակցական ձայնով հրաւիրեալ 21 եղբայրներ, ինչպէս նաեւ՝ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան 12 անդամներ (կամքէ անկախ պատճառներով կը բացակայէր եղբ. Յարութ Յարութիւնեան):

Այս հաստատումները կատարելէ ետք, ժողովը նկատուեցաւ օրինաւոր եւ սկսաւ իր աշխատանքներուն:

Մնայուն դիւանի ընտրութեան օրակարգին, առժամեայ դիւանի կազմին վրայ աւելցան եղբայրներ Բաֆֆի Սարգիսեան (Արեւմտեան Մ. Նահանգներ)՝ նախագահ, եղբ. Տիրան Շահինեան (Գանատա), քոյրեր Մարօ Քէշիշեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Սեւան Նազարեան (Փարիզ)՝ քարտուղարներ: Ապա, ընտրուեցան արխիւային, հաշուեքննիչ, բանաձեւի, նախահաշիւի եւ քուէախոյզ յանձնախումբերու անդամները:

Նիստը վերջ գտաւ երեկոյեան ժամը 9ին, յաջորդ օրուան օրակարգով քննելու համար Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները:



Պատգամաւորական ժողովին դիւանը:

Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու, Գանատայի եւ Լիբանանի պատգամաւորներ:



**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 99 ՄԱՍՆԱԳԻՒՂԵՐՈՒ**

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		635		127	762
Երեւան	1989	148	-	55	203
Աբովեան	1990	63	-	10	73
Չարենցաւան	1990	62	-	8	70
Գիւմրի	1990	30	-	5	35
Հրազդան	1991	56	-	5	61
Մասիս	1991	45	-	8	53
Արմաւիր	1991	52	-	8	60
Ախթալա	1991	37	-	5	42
Էջմիածին	1995	28	-	6	34
Վանաձոր	1995	28	-	5	33
Ապարան	1998	53	-	9	62
Արամուս	2002	33	-	3	36

ԶԱԲԱՆՔ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		50			50
Ախալքալաք	2001	25	-	-	25
Ախալցխա	2001	25	-	-	25

ԼԻՔԱՆԱՆ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1060	529	1356	2945
Պէյրուք	1924	165	102	274	541
Զահլէ	1927		Ոչ գործօն		
Թրիփոլի	1929	-	20	35	55
Պ. Համուս	1935	250	105	314	669
Այնճար	1940	200	70	150	420
Ճիւնի	1950	-	25	52	77
Անթիլիաս	1970	197	117	281	595
ժըտէյտէ	1974	157	20	150	327
Պաուլշիէ	1998	25	70	100	195

Սկառուտական ընդհանուր թիւը նկատի ունի նաեւ Շրջանային Խմբակատուութեան (6) եւ շեփորայտումբի (60) կազմերը:

ՍՈՒՐԻԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		1710	1141	1500	4351
Հալէպ	1925	785	814	1000	2599
Դամասկոս	1925	300	135	150	585
Լաթաքիա	1926	175	37	100	312
Գամիշլի	1931	250	155	200	605
Քեսապ	1994	200	-	50	250

ՅՈՒՆԱՍՏԱՆ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		120	152	176	448
Աթէնք	1924	48	110	95	253
Գոքինիա	1924	72	42	81	195
Սելանիկ	1928	-	-	-	-



ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Պատգամաւորական Ժողովին երկրորդ օրը, Հինգշաբթի, 20 Սեպտեմբերը, նախատեսուածին նման, յատկացուեցաւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան (Յունիս 2003-Սեպտեմբեր 2007) քննարկման:

Նիւթաբարոյական տեղեկագիրները նախապէս համացանցի ճամբով պատգամաւորներու տրամադրութեան տակ դրուած ըլլալով, Ժողովականները անմիջապէս անցան լուսաբանական հարցումներու: Նիւթական տեղեկագիրի պարագային, ամբողջական եւ մանրամասն գեկուցում մը ներկայացուցեցաւ փաուլշի-փոյնթով:

Լուսաբանական հարցումներուն յաջորդեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի սպառիչ պատասխանները տեղեկագիրներու անորոշ կամ մոռցըրած բաժիններուն շուրջ:

Այնուհետեւ, դարձեալ փաուլշի-փոյնթով, ներկայացուեցաւ միութիւնը բաղկացնող շրջաններու անդամական պատկերը, որմէ ի յայտ եկաւ, որ կարգ մը շրջաններ արձանագրած են անդամական թիւի զգալի աճ (Արեւմտեան Մ. Նա-





Հանգանքներ՝ 2256 անդամ, Սուրիա՝ 1112, Աւստրալիա՝ 171, Ալբերտա՝ 116, Արեւելեան Մ. Նահանգներ՝ 97): Պատահած են նաեւ թիւի նուազումներ (Պուլկարիա՝ 344, Լիբանան՝ 194, Յունաստան՝ 109, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.՝ 85, Փարիզ՝ 80, Քուէյթ՝ 61, Ադրբայջանիա՝ 35): Այսպէս, անցնող քառամեակին միութեան անդամական ընդհանուր թիւը հասած է 26 հազարի, 16.08 առ հարիւր յաւելումով (նախորդ քառամեակի անդամական ընդհանուր թիւն էր 21820): Մուսուլի մասնաճիւղը միութեան մեծ ընտանիքին վերամիանալէ ետք (2003), անյաղթահարելի պայմաններու բերումով կազմալուծուած է: Զաւախքի մասնաճիւղերը եւս (Ախալքալաք, Ախալցխա) յիշատակելի գործունէութիւն չեն ունեցած: Նոյնը կարելի է հաստատել Պուլկարիոյ շրջանի պարագային, որուն եօթը մասնաճիւղերը այսօր անուանական գոյութիւն ունին միայն:

Ընկրկումներու կողքին, նախորդ քառամեակի յաջողութիւնները նժարի վրայ կշռած են աւելի ծանր: «Կազմակերպչական քառամեակը»-ը իր արդիւնքները տուած է: Միութեան վերամիացած են Պաղտատի (343 անդամ), Կիպրոսի (150 անդամ) եւ Մարսէյի (400 անդամ) մասնաճիւղերը: Նոր մասնա-



**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Ս.Ը.Մ.Ի 99 ՄԱՍՆԱԾԻԴԵՐՈՒ**

Մ. ԱՐԵՒԵԼԵ	Հիմն.	Սկաւուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		416	318	1013	1747
Ադրբայջանիա*	1912	12	16	144	172
Գահիրէ*	1914	-	58	227	285
Երուսաղէմ	1935	60	30	45	135
Հայֆա	1937	-	15	30	45
Եաֆա	1937	-	12	28	40
Ամման	1937	80	-	221	301
Քուէթ	1983	150	50	143	343
Պաղտատ**	1949	114	137	175	426
Մուսուլ**	1960		Կազմալոյծ		

*Ադրբայջանիոյ «Կամք»-ը եւ Գահիրէի «Արարատ»-ը Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքին միացած 1974ին:

**35 տարուան ընդմիջումէ ետք Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքին միացած 2003ին:

ԿԻՊՐՈՍ*	Հիմն.	Սկաւուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
Նիկոսիա	1927	-	30	120	150

*2003ին վերամիացած Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքին:

ԵՒՐՈՊԱ	Հիմն.	Սկաւուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		183	191	479	853
Լոնտոն	1979	117	40	93	250
Միլանո	1983		Կազմալոյծ		
Վիեննա	1985	3	-	34	37
Սթոքհոլմ*	1991	30	75	200	305
Ալմէլօ	1996	33	52	136	221
Պուտափէշթ	2005	-	24	16	40

*2005ին վերակազմուած 10 տարուան կազմալոյծ շրջանէ մը ետք:

ՖՐԱՆՍԱ	Հիմն.	Սկաւուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		58	463	174	695
Փարիզ	1977	58	73	74	205
Վալանս	1983	-	40	50	90
Մարսէյ-«Արծիւ»*	1924	-	350	50	400

*33 տարուան ընդմիջումէ ետք Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքին վերամիացած 2007ին:

ճիւղ մը ստեղծուած է Հունգարիոյ մայրաքաղաք Պուտափէշթի մէջ (40 անդամ), իսկ երկու այլ մասնաճիւղեր՝ Սթոքհոլմ (305 անդամ) եւ Վիեննա (37 անդամ) ապրած են զգալի աշխուժութիւն:

Ընթացաւարտ Կեղրոնական Վարչութիւնը ունեցած է բեղուն գործունէութիւն:-

● Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական խմբապետական Դ. համագու-

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 99 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ**

ՊՈՒԼԿԱՐԻԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		98		92	209
Սոֆիա	1991	10	-	30	40
Ռուսէ	1991	15	-	21	36
Փլովտիվ	1992	40	-	19	59
Վառնա	1992	20	-	8	28
Շումէն	1997	8	-	-	8
Պուրկաս	1999	10	-	7	17
Տոպրիչ	1999	5	-	7	12

ԳԱՆԱՏԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		594	770	338	1602
Մոնթրեալ	1958	349	377	181	820
Համիլթոն	1968	-	12	11	23
Թորոնթօ	1969	212	292	103	599
Քեմպրիժ	1977	33	44	12	84
Սէնթ Գաթրինգ	1986	-	45	31	76

ԱՐԵՎԵԼԵԱՆ Մ.Ն.	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		469	365	319	1153
Ուաշինկթոն	1971	51	77	40	168
Պոսթըն	1973	195	65	57	317
Նիւ Եորք	1975	-	38	17	55
Նիւ ճըրզի	1975	47	20	38	105
Շիքակօ	1975	38	10	32	80
Ֆիլատելֆիա	1975	35	30	25	90
Տիքոնոյթ	1976	42	85	45	172
Փրովիտընս	1981	35	10	25	70
Ֆլորիտա	1981	20	25	25	70
Ալաբըմի	1986	6	5	15	26

Հ. ԱՄԵՐԻԿԱ	Հիմն.	Սկառուտ	Մարզիկ	Անդամ	Ընդհ.
		206	225	943	1374
Պուլեմոս Այրէս	1927	105	125	739	969
Գորտոպա	1929	40	45	115	200
Մոնթվիդեո	1987	61	55	89	205

մար (Մաղկաձոր, 9-14 Օգոստոս 2004):

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական է. մարզախաղեր (Աթէնք, 24 Յուլիս-31 Յուլիս 2005):
- Միջ-վարչական դիւանական Զ. խորհրդաժողով (Աթէնք, 1-3 Օգոստոս 2005):
- Հայկական Ցեղասպանութեան 90ամեակի ուխտագնացութիւն (Տէր Զօր, 1-2 Հոկտ. 2005):
- Կեդրոնական Վարչութեան վերանորոգուած կեդրոնատեղիի բացում (Պէյրուսթ, 17 Մարտ 2006):
- «Մարզիկ»ի 25ամեակի հանդիսաւոր տօնակատարութիւն (Պէյրուսթ, 19 Մարտ 2006):



● Հ ա մ ա - Հ.Մ.Ը.Մ.ական Լ. բանակում (Բիւրական, 31 Յուլիս-9 Օգոստոս 2006):

● Միջին Արեւելքի վարչութիւններու դիւանական Ա. խորհրդաժողով (Ամման, 8-10 Սեպտ. 2006):

● Միջին Արեւելքի բարձրաստիճան խմբապետներու Ա. համագումար (Պէյրուսթ, 25-26 Նոյ. 2006):



● Մասնակցութիւն ուղեկից միութիւններու խորհրդաժողովին (Պէյրուսթ, 18-20 Նոյ. 2004), Հայաստան-Սփիւռք Գ. խորհրդաժողովին (Երեւան, 18-20 Սեպտ. 2006) եւ համահայկական Գ. եւ Դ. խաղերու (Երեւան, 17-24 Օգոստոս 2003 եւ 18-25 Օգոստոս 2007):

● «Մարզիկ» պաշտօնաթերթի 40 թիւերու հրատարակութիւն:

● Հայաստան-Սփիւռք քոյր մասնաճիւղերու դրութեան ստեղծում:

● Հրատարակչական իրազօրոճումներ՝ «Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյց» (2005), «Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24» (2005), «Հ.Մ.Ը.Մ.ական կենցաղագիտութեան եւ փրոթոքոլային հասկացողութեան ուղեցոյց» (2007), «Մարզիկ»ի խմբագրականներու Բ. հատոր (2007) եւ «Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» Դ. հատոր (2007):

● Համացանցի կայք էջի ձևաւորում եւ արդիականացում:

● Մարզական կեանքէն ներս արհեստավարժ դրութեան ջնջում:

Տեղեկագիրներու քննութեանն եւ լուսաբանական հարցում-պատասխաններէն ետք, յետմիջօրէի նիստերը յատկաց-



**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ
Հ.Մ.Ը.Մ.Ի 99 ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ**

ԱՐԵՒՏԵԱՆ Մ. Ն.	Հիմն.	Սկառու	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		1636	5482	1659	8777
Լուս Անձելլու	1968	147	593	80	820
Սան Ֆրանսիսքո	1970	41	395	33	469
Ֆրեզնո	1971	81	168	54	303
Մոնթեպելլո	1974	31	171	23	225
Փասատինա	1977	117	702	47	866
Կլեմտյլ	1978	759	791	1036	2586
Օրենճ Քաունթի	1979	37	189	43	269
Սան Ֆեռնանտո	1979	63	1009	95	1167
Սան Տիեկո	1983	-	85	32	117
Ինլընտ Էմիլիո	1990	47	107	59	213
Սանթա Գլարա	1991	61	225	19	305
Սոլթ Լեյք Սիթի	1991		Կազմալոյծ		
Սաութ Պեյ	1992	31	47	13	91
Քրեսենթա հովիտ	1993	66	753	35	854
Պրայմեր	1995	84	77	20	181
Լաս Վեկաս	1997	23	46	11	80
Ֆինիքս	1998	29	46	28	103
Ուոլնաթ Քրիք	1999	19	78	31	128
Քոլորադո	2002		Կազմալոյծ		



Աշխատանքային
յանձնախումբերու
կողմէ
կը գեկուցեն քոյր
Լուսին Գազգեան,
եղբայրներ
Համբիկ
Միսաքեան,
Գոգո Սկրեան,
Շանթ Ժամկոչեան
եւ քոյր Արաքս
Գուլաճեան:

ԱՒՏՐԱԼԻԱ	Հիմն.	Սկառու	Մարզիկ	Անդամ	ԸՆԴԻ.
		144	520	160	824
Սիտնի «Անդրանիկ»	1965	48	200	80	328
Մելպուռն «Արաքս»	1966	20	90	15	125
Սիտնի «Նաւասարդ»	1973	10	80	20	110
Սիտնի «Կամք»	1981	6	10	15	31
Սիտնի «Արարատ»	1989	60	140	30	230

ւեցան ժողովականներու ըստ էութեան արտայայտութիւններուն եւ Կեդրոնական Վարչութեան խօսքին:

Այնուհետեւ, քուէարկուեցան հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու բանաձեւերը, որոնցմէ ետք բանաձեւի յանձնախումբը ժողովին ներկայացուց ընթացակարգ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան արժեւորումը կատարող բանաձեւը, գոր որդեգրուեցաւ «ԳՆԱՀԱՏԵԼԻ» բնորոշումով:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՆ
ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուրբաթ, 21 Սեպտեմբերին, Պատգամաւորական ժողովը ընթացաւ աշխատանքային նիստերու դրութեամբ: Աշխատանքային վեց յանձնախումբեր՝ սկառուական, մարզական, կազմակերպական, կանոնադրային, «Մարզիկ» պաշտօնաթերթ-կայք էջ եւ տնտեսական, երկարաշունչ ժողովներով խոր քննութեան ենթարկեցին իրենց վստահուած օրակարգի կէտերը եւ շրջաններու բանաձեւերու հիմամբ պատրաստեցին որոշումի կարգ անցնելիք առաջարկները: Նոյն օրը երեկոյեան եւ յաջորդ օրը գումարուած նիստերուն որդեգրուելէ ետք՝ այդ առաջարկները դարձան Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ քա-

ռամեակի գործունէութեան գլխաւոր սկզբունքները:

Յանձնախումբերուն կողմէ ներկայացուած եւ Պատգամաւորական ժողովին կողմէ որդեգրուած հիմնական որոշումներուն այստեղ կ'արժէ անդրադառնալ ընդհանուր գիծերով:

ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ

-Սկառուական դաստիարակչական աշխատանքներու պարագային, Կեդրոնական Վարչութիւնը քառամեակի առաջին տարուան ընթացքին կազմակերպէ սկառուական խմբապետական համագումար, ուր ուսումնասիրուի եւ քննուի խմբապետներու վերադարձուած դասընթացքի անյապազ իրագործման կարելիութիւնը, համադրուին եւ ճշդուին Վկայեալ ու Արարատեան կարգերու գիտելիքներու նիւթերը եւ նախազայլիկական (մոկլի) ծրագիրները:

Շրջաններու խմբապետները համագումարին ներկայանան իրենց հետ ունենալով իրենց շրջաններուն կողմէ մշակուած ծրագիրներն ու կարծիքները:

-Կեդրոնական Վարչութիւնը հետապնդէ որ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր շրջաններն ու մասնաճիւղերը մասնակցին համաշխարհային սկառուական ճամպորիներուն, որոնք գեղեցիկ ու բացառիկ առիթներ են Եռագոյն դրօշի հովանաւորութեան ներքեւ

Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներն ու հայրենիքը ծանօթացնելու աշխարհին: Մասնակցութիւնը ըլլայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անունին եւ ղեկավարութեան տակ:

-Նկատի ունենալով որ 2012 թուականը հայ սկաուտութեան հիմնադրութեան 100ամեակն է, Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի միջոցով աշխատանք տանի, որպէսզի Հայաստանը հրապարակէ շարք մը դրոշմաթուղթեր՝ նշելու համար 100ամեակը:

-Կեդրոնական Վարչութիւնը պատրաստ է Բիւրականի բանակավայրին գլխաւոր յատակագիծը, որ պէտք է ամբողջութեամբ բաւարարէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի կարիք-

ները եւ նախատեսէ բանակավայրի ապագայ յարդարման ու զարգացման աշխատանքները, որոնք պէտք է իրագործուին հանգրուանային ձեւով եւ առաջնահերթութեան կարգով, ըստ յատակագիծին:

Յատակագիծին պատրաստութեան բոլոր ծախսերը յանձն կ'առնէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Համլէթ Չրախճեան:

ՄԱՐԶԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ-ի մարզական կեանքին զարգացումը այսօր կը գտնուի լուրջ մարտահրաշքներու դիմաց: Հայկական այլ կազմակերպութիւններու նախաձեռնութիւնները եւ համահայկական խաղերը մեզ կը պարտաւորեցնեն ըլլալ բարձր մակարդակի վրայ: Հետեւաբար կ'առաջադրուին հետեւեալները:-

-Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերը կազմակերպուին 4 տարին անգամ մը, միաժամանակ ընդգրկելով բոլոր մարզաձեւերը՝ ի մասնաւորի ֆութպոլն ու պասքեթպոլը:

-Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերուն նոր մարզաձեւեր աւելցնելու պարագային նախընտրաբար հիմնուիլ Միջազգային Ոլիմպիական Կոմիտէի որդեգրած մարզաձեւերուն վրայ:

-Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու առթիւ Կեդրոնական Վարչութիւնը յառաջացնէ յատուկ թեքնիք յանձնախումբ մը, որուն տրուին յատուկ պարտականութիւններ եւ իրաւասութիւններ:

90ԱՄԵԱԿԸ 99 ՄԱՍՆԱԾԻՂՈՎ

Քանի մը ամիսէն Հ.Մ.Ը.Մ. կը թեւակոխէ իր հիմնադրութեան 90ամեակի տարին: 90 տարիներ, որոնց 34ը համազաղութային կառոյցով: 34 տարի առաջ միութեան մասնաձիւղերուն թիւը 28 էր, այսօր 99 է:

Անցնող 90 տարիներուն եւ յատկապէս վերջին 34 տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի հզօրացման եւ տարածման փաստը կու տան Պատգամաւորական յաջորդական ժողովներուն ներկայացուած մասնաձիւղերուն թուական պատկերները:

Ստորեւ՝ իւրաքանչիւր ժողովին ներկայացուած մասնաձիւղերուն թիւը:

- Ա. Պատգամաւորական ժողով (Պէյրուս, 13-15 Դեկտ. 1974) - 28 մասնաձիւղ:
- Բ. Պատգամաւորական ժողով (Նիկոսիա, 6-8 Ապրիլ 1979) - 46 մասնաձիւղ:
- Գ. Պատգամաւորական ժողով (Աթէնք, 14-17 Ապրիլ 1983) - 55 մասնաձիւղ:
- Դ. Պատգամաւորական ժողով (Աթէնք, 17-20 Ապրիլ 1987) - 57 մասնաձիւղ:
- Ե. Պատգամաւորական ժողով (Աթէնք, 29 Մարտ-3 Ապրիլ 1991) - 62 մասնաձիւղ: Ժողովին առաջին անգամ ըլլալով կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի կազմակերպութեան ներկայացուցիչները:
- Զ. Պատգամաւորական ժողով (Պէյրուս, 11-17 Ապրիլ 1995) - 83 մասնաձիւղ:
- Է. Պատգամաւորական ժողով (Պէյրուս, 31 Մարտ-5 Ապրիլ 1999) - 87 մասնաձիւղ:
- Ը. Պատգամաւորական ժողով (Ծաղկածոր, 4-7 Յունիս 2003) - 90 մասնաձիւղ: Ժողովին առաջին անգամ ըլլալով կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Զաւախքի կազմակերպութեան ներկայացուցիչը:
- Թ. Պատգամաւորական ժողով (Ծաղկածոր, 19-23 Սեպտ. 2007) - 99 մասնաձիւղ: Ժողովին առաջին անգամ ըլլալով կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի, Մարսիի, Կիպրոսի եւ Հունգարիոյ ներկայացուցիչները:



Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ իւրերու հետ:



Ժողովին մասնակից թոյր պատգամաւորներ:

-Քննել համա-Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ խաղերը Հայաստանի մէջ կատարելու կարելիութիւնը:

-Փորձառական շրջանի մը համար, համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու մասնակցող խումբերուն հետ մասնակցին նաեւ կրտսեր տարիքի խումբեր (18 տարեկանէն վար), ըստ շրջաններու կարելիութեան:

-Համահայկական խաղերուն անպայման մասնակցել Հ.Մ.Ը.Մ.ի անունով: Եթէ քաղաքին մէջ կան մարզական այլ միութիւններ, որոնք կ'ուզեն մասնակցել յիշեալ խաղերուն, մասնակցել այլ քաղաքի անունով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

-Կեդրոնական Վարչութիւնը յառաջացնէ կազմակերպչական յանձնախումբ մը, որ ուսումնասիրէ եւ պատրաստէ միութեան յառաջիկայ ութ տարիներու գործունէութեան ուղեգիծը, ինչպէս նաեւ սերտէ կարելիութիւնները գոյացնելու Եւրոպայի մասնաճիւղերը համադրող մարմին մը, որ փորձառական շրջանէ մը ետք՝ նախաքայլը ըլլայ ապագայի Եւրոպայի Շրջանային Վարչութեան մը կազմութեան:

-Կեդրոնական Վարչութիւնը մշակէ վարչականներ պատրաստելու ծրագիր մը, նաեւ օգտագործէ համացանցի ընձեռած կարելիութիւնները՝ բոլոր մակարդակի դաստիարակչական աշխատանքներու համար:

-Կեդրոնական Վարչութիւնը թափ տայ ցամաքամասային միջ-մասնաճիւղային աշխատանքներուն, բոլոր բնագաւառներէ ներս:

-Կեդրոնական Վարչութիւնը մօտէն հետեւի Հայաստանի կազմակերպչական աշխատանքներու հօրացման:

-Կեդրոնական Վարչութիւնը հետապնդէ միութեան կազմալոյծ մասնաճիւղերու վիճակը եւ թափ տայ անոնց գործունէութեան:

-Կեդրոնական Վարչութիւնը հետապնդէ եւ օգնէ որ մինչեւ 2009, բոլոր շրջաններու անդամական տուեալները ներմուծուին Կեդրոնական Վարչութեան data baseին մէջ:

-Միութեան 90ամեակին առիթով մինչեւ Հոկտեմբեր 2007ի աւարտը պատրաստուի յատուկ խորհրդապատկեր (լուկո):



Խորհրդապատկերը պիտի օգտագործուի 2008ի օրացոյցներուն եւ պաշտօնական թուղթերուն վրայ:

-Միութեան 90ամեակին առիթով շրջաններուն թելադրել, որ կազմակերպեն յատուկ ձեռնարկներ: Նոյն առիթով քննել կարելիութիւնները Երեւանի կեդրոնական վայրի մը մէջ տեղադրելու Հ.Մ.Ը.Մ.ի յուշակոթող մը եւ կամ պողոտայ մը անուանակոչել միութեան անունով:

-Կը թելադրուի պատրաստել Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին նուիրուած Յուշամատեան մը, որուն մէջ ունենալ հայ թէ օտար պետական, ազգային եւ եկեղեցական անձնաւորութիւններու ողջոյնի խօսքեր:

-Կը թելադրուի 90ամեակի առիթով պատրաստել յատուկ յուշանուէրներ եւ ցրուել զանոնք միութեան բոլոր շրջաններուն:

ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ

Ժողովը կատարեց կանոնադրային կարգ մը փոփոխութիւններ, որոնք յաւելեալ յստակացում մտցուցին միութեան ընդհանուր Ծրագիր-Կանոնադրին մէջ:

Փոփոխութիւնները կը վերաբերին կանոնադրի յօդուածներու խմբագրական միօրինակութեան, արտայայտուած կարգ մը միտքերու բիւրեղացման եւ նկատուած վրէպներու սրբագրութեան (փոփոխութիւնները տեղ կը գտնեն Ծրագիր-Կանոնադրի շուտով լոյս տեսնելիք նոր հրատարակութեան մէջ):

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ – ՀԱՄԱՅԱՆՑԻ ԿԱՅՔ ԷԶ

Ժողովը վերահաստատեց «Մարզիկ»ը ամսական դրութեամբ հրատարակելու յանձնառութիւնը, շրջաններու վրայ պարտք դնելով որ ունենան «Մարզիկ»ի իրենց ներկայացուցիչները կամ յանձնախումբերը:

Ժողովը նաեւ որոշեց.-

-«Մարզիկ»ը հրատարակել ամբողջութեամբ հայերէն, իսկ ամսաթերթին անգլերէն թարգմանութիւնը ներկայացնել համացանցի կայք էջով:

-«Մարզիկ»ի տարածման թափ տալ հետեւեալ միջոցներով.-



Յիշատակի Գկար՝ Գ.Ս.Ը.Ս.Ի Միջին Արեւելքի պատգամաւորներու:



...Եւրոպայի պատգամաւորներու:

ա) Շրջաններէն ներս քարոզչական լայն աշխատանք տանելով:

բ) Ըստ յարմարութեան ցենզի սակերուն վրայ «Մարզիկ»-ի բաժանորդագրութեան գումարները աւելցնելով:

գ) Բաժանորդագրութեան յատուկ կտրօններ պատրաստելով եւ թերթին հետ ցրուելով: Կտրօններ բաժնել նաեւ ձեռնարկներու ընթացքին:

-«Մարզիկ»-ի վարչութեան մաս կազմեն նաեւ Լիբանանի կողքին շրջաններէն ներկայացուցիչներ՝ վարչական աշխատանքները տեղւոյն վրայ հետապնդելու համար:

-«Մարզիկ»ը օժտուի կիսաժամ գործավարով մը, որ պիտի կատարէ թերթին վարչական աշխատանքները:

-«Մարզիկ»-ին նիւթական ապահովելու համար նկատի ունենալ հետեւեալ միջոցները.-

ա) Թափ տալ «քաջաբեր անդամ»ներու դրութեան՝ բոլոր շրջաններէն ունենալու համար նուիրատու եղբայրներ:

բ) Հովանաւորներ ապահովել թերթին թիւերուն, որմագրներուն եւ բաժիններուն:

գ) Աշխատանք տանիլ մեծ թիւով ծանուցում հաւաքելու զանազան շրջաններէ, նաեւ համացանցի կայք էջին վրայ ծանուցումներ ունենալով:

-«Մարզիկ»ը PDF-ի ձեւով ներկայացնել համացանցի էջով, միաժամանակ թերթին բոլոր նիւթերը հայերէնով եւ անգլերէնով ներկայացնել առանձին:

-Շրջանները ունենան կայք էջի եւ data base-ի իրենց ներկայացուցիչները:

-Շրջանները համացանցի իրենց հասցէներէն ջնջեն H.M.E.M. արտայայտութիւնը եւ զայն փոխարինեն Homenetmen բառով:

-«Մարզիկ»-ի նախկին թիւերը PDF-ի ձեւով գետեղել միութեան կայք էջին մէջ:

-Շրջաններու համացանցի կայքէջերը իրենց գլխաւոր էջերուն վրայ ունենան «Մարզիկ»ը ծանօթացնող բաժիններ:

Հ.Մ.Ա.Կ.Ի ՈՂՋՈՒՆԵԼԻ ԵՐԿՈՒ ԲԱՆԱՁԵՒԵՐԸ
Բանաձեւերու որդեգրման օրակարգին, Իրանի Հայ Մշա-

կութեային Արարատ Կազմակերպութեան (Հ.Մ.Ա.Կ.) ներկայացուցիչը երկու առիթով ուրախալի անակնկալ մը հրամցուց ժողովականներուն, երբ առաջարկեց որոշումի կարգ անցընել երկու բանաձեւեր, որոնք կը հաստատեն, թէ Հ.Մ.Ա.Կ.ը այսուհետեւ համա-Հ.Մ.Ը.Ս.Վ.ական բանակումներուն եւ մարզախաղերուն ներկայ պիտի չըլլայ իբրեւ հիւր, այլ՝ պիտի մասնակցի իբրեւ շրջան եւ, առ այդ, պիտի կատարէ նիւթական մասնակցութեան իր լրիւ պարտաւորութիւնները:

Հ.Մ.Ը.Ս.Վ.-Հ.Մ.Ա.Կ. գործակցութեան ճամբուն վրայ առնուած պատմական այս կարեւոր քայլը երկու առիթով ալ արժանացաւ Պատգամաւորական Ժողովի գնահատանքին եւ ներկաներու ծափողջոյններուն:

Ստորեւ բանաձեւերը իրենց ամբողջութեամբ.-

●Քանի որ օրըստօրէ կարեւոր կը նկատուի միասնական աշխատանքներ կազմակերպելու հրամայականը Հ.Մ.Ը.Ս.Ի եւ Հ.Մ.Ա.Կ.ի միջեւ, բացի համա-Հ.Մ.Ը.Ս.Վ.ական բանակումներու հրաւերէն, որ կ'առաքուի Հ.Մ.Ա.Կ.ին, նկատի առնուի նաեւ միւս միջոցառումներուն (սկստակական սեմինար, խմբապետական հանդիպումներ, ժողովներ, մասնաւանդ շրջանային մակարդակի) Հ.Մ.Ա.Կ.ին մասնակցութիւնը որպէս շրջան եւ ոչ որպէս հիւր:



...Աւստրալիոյ պատգամաւորներու:



...Արեւմտեան, Արեւելեան եւ Հարաւային Ամերիկացիներու եւ Գանատայի պատգամաւորներու:

Այդ ձեռնարկներու մասնակցութեան ընթացքին Հ.Մ.-Ա.Կ-ը պիտի կատարէ շրջանի մը վրայ պարտք դրուած նիւթական իր պարտաւորութիւնը:

● Քանի որ օրըստօրէ կարեւոր կը նկատուի միասնական աշխատանքներ կազմակերպելու հրամայականը, բացի համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու հրաւերէն, միւս միջոցառումներուն (Շրջանային մարզախաղեր, ժողովներ, սեմինարներ) Հ.Մ.Ա.Կ-ը նկատի առնուի որպէս շրջան եւ ոչ որպէս հիւր: Այդ ձեռնարկներու մասնակցութեան ընթացքին Հ.Մ.-Ա.Կ-ը կատարէ շրջանի մը վրայ պարտք դրուած նիւթական իր պարտաւորութիւնը:

ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՎԵՐՁԻՆ ՆԻՍՏԵՐԸ

Կիրակի, 23 Սեպտեմբերի առաւօտեան, երկու նիստով վերջ գտան Պատգամաւորական Յրդ ժողովին աշխատանքները:

Առաջին նիստին ժողովը ուսումնասիրեց նախահաշիւի յանձնախումբին կողմէ յառաջիկայ չորս տարիներուն համար ներկայացուած պիւտձէի նախահաշիւը եւ ըստ այնմ կատարեց շրջաններու ցենզերուն բաժանումը: Չորս տարուան համար Կեդրոնական Վարչութեան պիւտձէ ճշդուեցաւ 695 հազար տոլար:

Երկրորդ նիստով կատարուեցաւ նոր Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն: Անդամներու թիւ ճշդուեցաւ 9: Յետքուէարկութեան, 2007-2011 քառամեակին համար Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ ընտրուեցան եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Կարպիս Գապասագալեան, Միհրան Շիմչիբեան (Վիբանան), Յարութ Յարութիւնեան (Հայաստան), Գօգօ Պալեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Վահրամ Դանիէլեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Արմէն Կէտիկեան (Գանատա), Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա) եւ Գարլոս Սէֆէրեան (Հարաւային Ամերիկա):

Վերջապէս, 10 երկար նիստերէ ետք, հասաւ Պատգամաւորական ժողովին փակման պահը: Սրտառուէ միջնորդարի մէջ, սրտի խօսքեր արտասանեցին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամները, շրջաններու ներկայացուցիչները

եւ ժողովին դիւանը: Յուզիչ ելոյթներ ունեցան յատկապէս այն եղբայրները, որոնք կանոնադրային տրամադրութիւններու բերումով կը դադրէին Կեդրոնական Վարչութեան անդամակցութենէ:

Այս առիթով Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական աւանդներուն եւ բարոյական սկզբունքներուն հաւատարիմ մնալու պատգամներ փոխանցեցին Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Վարուժան Սերոբեան եւ Ժիրայր Սարգիսեան: Սրտի խօսքեր փոխանցեցին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Հրաչ Տէր Սարգիսեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Ստեփան Տէր Պետրոսեան եւ Գառնիկ Մկրտիչեան:

Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Ալպէրթ Աճէմեան: Ան ըսաւ, որ ուրախութիւն, հաճոյք եւ պատիւ էր Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն ժողովին մասնակցութիւնը: «Հ.Մ.Ը.Մ.ը հայ իրականութեան մեծագոյն կազմակերպութիւնն է, որ մեծ դեր եւ առաքելութիւն ունեցած է եւ պիտի ունենայ», շեշտեց Աճէմեան:

Իր խօսքը շարունակելով, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամը մաղթեց անշեղ ու անաղարտ պահել գաղափարական այն շէնքը, որուն վրայ բարձրացած է Հ.Մ.Ը.Մ.ի կառույցը: Օրուան մարտահրաւէրներուն մասին խօսելով, ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. մեծ աշխատանք ունի իր գործունէութիւնը արդիականացնելու եւ հայրենացնելու ուղղութեամբ:

Խօսքերէն ետք, Պատգամաւորական ժողովին փակումը կատարուեցաւ կէսօրուան ժամը 1.30ին, «Յառաջ նահատակ» քայլերգին յոտնկայս խմբերգումով:

Փակման քայլերգին յաջորդեցին ողջագուրումներ եւ շնորհաւորութիւններ: Պատգամաւորներ իրենց հաւասար գնահատանքը փոխանցեցին հին թէ նոր Կեդրոնական Վարչութիւններու անդամներուն, անգամ մը եւս հաստատելով, որ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ չկայ հին թէ նոր, այլ կայ միայն փոխանցում: Նորերը կը յառաջանան հիներու ճամբով, միութիւնը միութիւնն դարձնող աւանդութիւններու եւ իտէպներու պահպանումով, հայանուէր առաքելութեան մը հետապնդման մնայուն եւ հաւաքական ջանքով:

ՊԱՏՊԱՄԱԻՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԱԴԱՐՆԵՐՈՒՄ



Հ .Մ.Ը.Մ-ի 9-րդ Պատգամաւորական Ժողովի աւարտին, չորսօրեայ սպառիչ նիստերէ եւ քննարկումներէ ետք, միութեան մեծ ընտանիքին ներկայացուցիչները անմոռանալի երեկոյ մը անցուցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 18ամեակին նշանակալից ճաշկերոյթ-պարահանդէսին իրենց մասնակցութեամբ:



Պատգամաւորական Ժողովին կազմը, հիւրեր, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մեծաթիւ անդամներ ու համակիրներ, ընդամէնը 250 հոգի, ուրախ երեկոյ մը անցընելով՝ բարոյական ու նիւթական իրենց զօրակցութիւնը յայտնեցին միութեան հայրենի գործունէութեան ծաւալման եւ հզօրացման:

Ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 8ին, Նոր Նորքի «Իգտիր» ճաշարանին մէջ: Պաշտօնական բաժինը ընդգրկեց խօսքեր, որոնց կողքին եւ որոնցմէ ետք կիրարկուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր՝ մասնակցութեամբ հայրենի երգիչ-երգչուհիներու:

Ճաշկերոյթին սկիզբը, ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ յայտնեց, որ այս օրը նշանակալից է միութեան համար, որովհետեւ գալն բաղկացնող շրջաններու ներկայացուցիչները կը գլուխը հայրենիքի մէջ, հոգևոր-սրտով միացած են հայրենիքի հետ:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ-ի ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան խօսք առնելով յայտնեց, որ ճաշկերոյթին ներկայ են Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի հիմնադիր սերունդը եւ այդ սերունդին յաջորդած երիտասարդները, բոլորը նոյն գաղափարի ու տեսիլքի նուիրեալներ: Եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց Պատգամաւոր



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 18ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

րական ժողովի հիւրընկալութեան համար եւ մաղթեց, որ ներկաները իրենց շրջանները կը վերադառնան վերաթարմացած կորովով եւ խանդավառութեամբ:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի առաջին երգուեալ սկառուտը, Հայաստանի Ազգային ժողովի անդամ եղբ. Գեղամ Մանուկեան: Ան երախտիքով յիշեց անդարձ մեկնած երեք Հ.Մ.Ը.Մ-ականներ, որոնք մեծ դեր ունեցան Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի մէջ վերընձիւղման աշխատանքներուն: «Եղբայրներ տղքթ. Միսաք Արզումանեան, Երուանդ Տէմիրճեան եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեան 1989ին Հայաստան այցելելով սերմերը ցանեցին Հ.Մ.Ը.Մ-ի հայրենիքի կառոյցին», ըսաւ ան: Շարունակելով, ան յիշեց նաեւ եղբայրներ Վարդան Բախչեանը եւ Եուրա Նաւոյեանը, որոնք 18 տարի առաջ կարեւոր ներդրում ունեցան Հ.Մ.Ը.Մ-ի Երեւանի մասնաճիւղին ստեղծման մէջ:

Այնուհետեւ, նորընտիր Կեդրոնական Վարչութեան անունով խօսք առաջ եղբ. Միհրան Շիմշիրեան: Ան շնորհաւորեց ընթացաւարտ Կեդրոնական Վարչութիւնը իր գնահատելի աշխատանքին համար, որ կարողացաւ նոր որակ եւ մակարդակ տալ միութեան աշխատանքներուն: Եղբ. Շիմշիրեան շնորհակալութեան խօսք ուղղեց Պատգամաւորական ժողովի մասնակիցներուն, որոնք իրենց վստահութիւնը տուին նորընտիր Կեդրոնական Վարչութեան: Ան շեշտեց, որ միասնակամ աշխատանքով միայն կարելի պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ը տեսնել վերելքի վրայ:

Խօսքերու միջեւ եւ աւարտին, ճաշկերոյթ-պարահանդէսը ձոխացուցին «Հայասա» պարախումբը, «Օլիմպիա» նուագախումբը եւ արուեստագէտներ Ազատ Թամար, Արսէն Գրի-

գորեան, Գրիգոր Վէյնէրեան, Լուսինէ Պօղոսեան, Էտուարտ Միքայէլեան եւ Լէյլա Սարիբէկեան: Միջոցորտէն խանդավառուած՝ կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ, որոնց ընդհանուր գումարը հասաւ շուրջ 17 հազար ամ. տոլարի:

ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Վարանդ Մելքոնեան	\$2000
Բագրատ Եսայեան	\$2000
Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւն	\$1000
Յարութիւնեան	\$1000
Աւետիս Պերպերեան	\$1000
Օշին Փիրումեան	\$1000
Չարլի Կալեան	\$1000
Գօգօ Թոփալեան	\$1000
Հ.Մ.Ը.Մ.ի Փարիզի քոյրեր եւ եղբայրներ	\$1000
Ստեփան Տէր Պետրոսեան	\$500
Սարգիս Տէր Պետրոսեան	\$500
Ժիրայր Սարգիսեան	\$500
Գօգօ Պալեան	\$500
Ֆրէտ Չայրապետեան	\$500
Պերճ եւ Յակոբ Գալայճեաններ	\$500
Գէորգ Անթունեան	\$500
Աբօ Սաղտըճեան	\$500
Ծոն Պերպերեան	\$500
Էտի Չոհրապետեան	\$500
Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւն	\$500
Արման Քիլեճեան	\$300
Սարգիս Արեւեան	\$200
Հ.Մ.Ը.Մ.ի Կիպրոսի եղբայրներ	\$200
Պերճ Սոմճեան	\$100
Միհրան Շիմշիրեան	\$100
Պօղոս Խաճառեան	\$100
Յակոբ Մելիքսէթեան	\$100
Ծոնի Արեւեան	\$100
Տէր եւ տիկին Տէրտէրեաններ	100 եւրօ
Ալէք Խաչատրեան	40 փաունտ



ՈՐՊԷՍՁԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՉՏԿԱՐԱՆԱՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԶՕՐ ՄՆԱՅ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ՅՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)



Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Ժամկոչեան՝ ներկայացուցիչ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի, Յարգելի հիւրեր, Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ,

Այս օրը, 19 Սեպտեմբերը, այս պահէս սկսեալ իր յատուկ տեղը պիտի ունենայ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան պատմութեան մէջ: Սովորական թուական մը պիտի չըլլայ ան այլեւս, այլ՝ դարձակէտ նշող օր մը հայ կեանքի երիտասարդական մեծագոյն կազմակերպութեան եւ, անոր ճամբով, հայ ժողովուրդի լայն զանգուածին համար:

Արդարեւ, միութեան 23 շրջաններէն 78 պատգամաւորներ այսօր, հանդիսաւոր այս պահուն, կը սկսին Հ.Մ.Ը.Մ.ի Յրդ Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն, նոր թափ եւ մղում տալով մարմնակրթանքի ճամբով հայ մարդու կերտման եւ հայապահպանման համազգային մեր ճիգերուն: Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Յրդ Ժողովը ցարդ գու-

մարուած Պատգամաւորական Ժողովներուն մեծագոյնն է, շրջաններու եւ պատգամաւորներու մասնակցութեան իր թիւով, ինչ որ պերճախօս փաստը կու տայ նախորդ Պատգամաւորական Ժողովին կողմէ հռչակուած «կազմակերպչական քառամեակ»ի արդիւնաւէտութեան եւ յաջողութեան: Արդարեւ, առաջին անգամ ըլլալով Պատգամաւորական Ժողովի կը մասնակցին միութեան նորաստեղծ կամ վերաշխուժացող շրջաններէն Հունգարիան, Շուէտը, Կիպրոսը, Մարսէյը, Պաղտատը, Ամմանը եւ տակաւին ուրիշներ:

Ժողովին հիւրաբար կը մասնակցին նաեւ, առաջին անգամ ըլլալով, Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան եւ Համազգայինի ներկայացուցիչները:

Շրջաններու եւ հիւրերու այս մեծաթիւ ներկայութիւնը անպայման որ կը գօտեպնդէ մեզ եւ խրախոյս կու տայ դալիք օրերուն կրկնապատկելու մեր ճիգերը, երիտասարդ սերունդի առողջ ու հայեցի դաստիարակութեան մեր աշխատանքները, եւ այս, այնպիսի պահու մը, երբ մեր շուրջի պայմանները կը թելադրեն մեզ թիւովարել հոսանքն ի վեր: Արդարեւ, համաշխարհայինացումը, գաղափարական եւ բարոյական արժէքներու նահանջը, հայ կեանքէն ներս թափանցող այլազան խորթ երեւոյթները, անտարբերութիւնը եւ կրաւորականութիւնը մեծ աւերներ կը գործեն ամէնուրեք:

Սփիւռքի մէջ հայը հայ պահելու, իսկ Հայաստանի մէջ տիպար քաղաքացիներ կերտելու մեր առաքելութիւնը օրէ օր կը բախի նոր դժուարութիւններու եւ կ'ենթադրէ ուժերու մեծ լարում՝ նոր օրերու համապատասխան միջոցներով յաղթահարելու համար մեր դէմ ցցուած բոլոր դժուարութիւնները, որպէսզի հայութիւնը չտկարանայ եւ Հայաստանը հզօր մնայ իր ապագայ սերունդներով:

Այդ տեսլականով Հ.Մ.Ը.Մ. ճամբայ ելաւ 89 տարիներ առաջ, Հայաստանի Ա. անկախութեան հռչակման հետ: Նոյն տեսլականով, տարիներ շարունակ ան Սփիւռքի սերունդներ

րուն աչքերը սեւեռեց դէպի Հայրենիք, անպայման օր մը գայն անկախ տեսնելու ցանկութեամբ: Ու երբ ցանկութիւնը դարձաւ իրականութիւն, նոյն տեսլականը միութիւնը վերադարձուց Հայաստան եւ իբրեւ Հայաստանի Ազգային Սկառուտական Կազմակերպութիւն, գայն լծեց հայրենանուէր աշխատանքի:

Այսպէս, հայրենի հողին վրայ տեղի ունեցան միութեան վերջին 4 համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները, համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտական չորրորդ համազումարը, միութեան Պատգամաւորական Ցրդ Ժողովը եւ տակաւին՝ շրջանային ու համահայաստանեան տարողութեամբ բազմաթիւ սեմինարներ ու բանակումներ: Անկախ համահայկական չորս մարզախաղերու մեծաթիւ մասնակցութենէն, ներհայաստանեան մասնաճիւղային գործունէութենէն եւ Հայաստան-Սփիւռք քոյր մասնաճիւղերու ստեղծման քայլէն:

Այս բոլորէն ետք, ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.ի Ցրդ Պատգամաւորական Ժողովը մեզի, միութեան 99 մասնաճիւղերու աւելի

Սփիւռքի մէջ հայը հայ պահելու, իսկ Հայաստանի մէջ տիպար քաղաքացիներ կերտելու մեր առաքելութիւնը օրէ օր կը բախի նոր դժուարութիւններու եւ կ'ենթադրէ ուժերու մեծ լարում՝ նոր օրերու համապատասխան միջոցներով յաղթահարելու համար մեր դեմ ցցուած բոլոր դժուարութիւնները, որպէսզի հայութիւնը չտկարանայ եւ Հայաստանը հզօր մնայ իր ապագայ սերունդներով:

քան 25 հազար անդամներուն, կը ներկայանայ իբրեւ հաշուեքննութեան, վերարժեւորման, վերատեսութեան եւ վերահաստատման պահ:

Հաշուեքննութիւն՝ Պատգամաւորական Ցրդ Ժողովէն, Յունիս 2003էն սաղին կատարուած եւ անկատար բոլոր աշխատանքներուն:


Վերարժեւորում՝ մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի նպատակներուն ի խնդիր միութեան կտրած ու կտրելիք ուղիներուն:

Վերատեսութիւն՝ սկառուտական եւ մարզական գործունէութեան ցարդ մեր որդեգրած միջոցներուն, այսօրուան արժեքափերուն եւ մեր պայմաններուն յարմարող նոր ծրագիրներու մշակման համար:


Եւ, վերջապէս, վերահաստատում՝ Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական դրօշին տակ, միութեան աշխարհասփիւռ միաւորները միաձոյլ կամքի վերածելու եւ, իբրեւ «Տորմիդ հրաթեւ», մեր ժողովուրդն ու հայրենիքը յաղթանակէ յաղթանակ առաջնորդելու մեր ուխտին:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY




Photos: © Yann Arthus-Bertrand/Le Monde, Licence 075 990031 - StudioVIZBY 2007/2005


Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey


Guided Tours for 8 Days or 12 Days




11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com



48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com



67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՊԱՀՊԱՆԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆԸ ՑՈՒԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի
ԳՐԴ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Յարգելի հիւրեր եւ սիրելի Հ.Մ.Ը.Մ.ական հոգեայրներ,
Համազգայինի կեդրոնական վարչութեան անունով կ'ողջունեմ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գրգ ժողովը եւ անոր բոլոր մասնակիցները: Կը մաղթեմ, որ Նաւասարդեան ու Ողիմպիական մարզական առողջ ոգին տիրապետող ըլլայ ժողովի ամբողջ տեւողութեան:

Հին յոյներու «առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» խօսքը Հ.Մ.Ը.Մ.ի եւ Համազգայինի միջեւ գործակցութեան նպատակը բացատրող ամէնէն յարմար խօսքն է, անկասկած: Մարդու կեանքին մէջ ֆիզիքական առողջութեան կարեւորութիւնը բացատրութեան չի կարօտիր: Առանց այդ մարմնական առողջութեան՝ բացառիկ յատկութիւններու տէր անհատներն են միայն, որ կրնան պահել իրենց մտային առողջութիւնը: Իսկ առանց մտային առողջութեան անհատը ուշ կամ կանուխ տեղի կու տայ ֆիզիքական առողջութիւնը քայքայող զանազան տեսակի մոլորութիւններու, մանաւանդ՝ քաղաքակրթական ներկայ պայմաններու մէջ, ուր չէզոքացուած են անցեալի բարոյական բոլոր պարտադրանքները՝ իրենց բացայայտ անպատեհութիւններով, բայց նաեւ՝ զանգուածներու համար իրենց ակնբախ առաւելութիւններով:

Բոլորս կը զգանք ու կը տեսնենք, որ ներկայ աշխարհը սխալ ընթացք մը որդեգրած է. տնտեսութիւնը սկսած է դեկավարել մարդկային կեանքի բոլոր մարզերը, հոգեկան աշխարհը՝ ներառեալ: Կ'ապրինք տնտեսական ամբողջատիրութեան դարաշրջանի մը մէջ: Տնտեսական շահերու ապահովումը միշտ ալ կարեւոր եղած է մարդկային պատմութեան մէջ, սակայն վերջին քանի մը տասնամեակներու ընթացքին գերիշխող հանգամանք ստացած է: Անցեալին, մարդու նիւթական ընչաքաղցութիւնը որոշ չափով կը հաւասարակշռուէր կրօնական կեղծ կամ իրական հաւատքի թելադրած ենթակայական սահմանափակումներով: Այսօր կրօնքը բաւարար վստահութիւն եւ ապահովութիւն ներշնչող ազդակ չէ, քանի ինքը տագնապի մէջ է եւ անգոր՝ կեանքի նոր երեւոյթներու մասին իր համոզիչ մեկնաբանութիւնները տալու:



Կը մնայ մարդուն համար միակ իսկական ու տիեզերական միջոցը՝ մարդկային բանականութենէն սերող գիտակցութիւնը: Գիտակից մարդն է, որ ատակ է իր եւ իր պատկանած հաւաքականութեան առարկայական ու մանաւանդ՝ ենթակայական շահերը պաշտպանելու: Իսկ այդ գիտակցութիւնը պէտք է մշակել, զարգացնել, ինքնավստահ դարձնել, որպէսզի ան անկախ եւ ուժական գործիքի մը վերածուի, որպէսզի առնուող իւրաքանչիւր քայլ ընդունելի ըլլայ հասարակութեան համար, որպէսզի երիտասարդութիւնը կրկին դառնայ հաւաքական կեանքի առանցքը: Միաժամանակ պէտք է հետապնդել մտակրթութիւնը՝ մարմնակրթութեան կողքին, որպէսզի կարելի ըլլայ ստեղծել առողջ միտքը՝ առողջ մարմնի մէջ: Ասիկա՛ է մեր օրերուն անհատի, ինչպէս նաեւ՝ հաւաքականութեան առողջ վերապրելիութիւնը ապահովող ամէնէն վստահելի եւ ազդու միջոցը:

Այս գործը դիւրին գործ մը չէ՝ մանաւանդ մեր օրերուն: Էր ատեն մը, երբ աշխարհի մեծերը շահագրգռուած էին փոքր ժողովուրդներու եւ առհասարակ զանգուածներու մտաւոր զարգացումով, որովհետեւ զաղուժատիրութեան տարած-

ման առաջին հանգրուանին անհրա-
ժեշտ նկատուած էր գանոնք հեռացր-
նել իրենց աւանդական մշակոյթէն:
Այսօր կացութիւնը շրջուած է.
տնտեսական հօգր աշխարհը իր դի-
մացը կ'ոզէ գտնել միայն իր սպա-
ռողական մոլուցքին գոհացում
տուող գանգուածներ: Անոնց հա-
շիւով՝ գանգուածի գիտակցութիւնը
պէտք է զարգացած ըլլայ այնքան մը
միայն, որ կարենայ ընկալել «Մեծ
Նրբօր» մատնացոյց ըրած ուղղու-
թիւնը: Քարոզչութեամբ եւ գովազ-
դային ճարտարարուեստի հսկայա-
կան՝ գերարդիական արհեստագի-
տութեան ընծայած բոլոր միջոցնե-

**Երիտասարդութեան համար
հրապուրիչ է փոփոխութիւնը,
նորութիւնը, տարօրինակը,
արտասովորը, իսկ մենք մեր
բացարձակ մեծամասնու-
թեամբ կը յամառինք իրեն
հրամցել հինը, դասականը,
աւանդականը, արդէն ընդուն-
լածը: Մեր կարծիքով ազգային
իմաստով առողջ քաղաքակա-
նութիւնը այս երկու մօտեցում-
ներուն համադրումն է եւ
իմաստուն կենակցութիւնը:**

րու օգտագործումով, հոգեբանական գիտութեան տարակա-
նոն կիրառումով եւ մարդկային բնագոյններու ախտային
զրգուումով մէջտեղ եկած է արտադրողականէն անդին անց-
նող անիրական տնտեսութիւն մը, որ իր ունեցած դժուարու-
թեամբ ղեկավարելի վերիվայրումներով՝ ամէն վայրկեան
կը սպառնայ փորձանք դառնալ համայն մարդկութեան
գլխուն: Այդ քարոզչութեան գլխաւոր թիրախներէն է նաեւ
այն խաւը, որ կը խոստանայ երկար ժամանակ ենթակայ ըլլալ
այդ քարոզչութեան հետեւանքներուն, այսինքն՝ երեխան,
պատանին ու երիտասարդը: Այս միջնորտին մէջ մեծապէս
կը տուժէ ժողովրդային կրթութիւնը: Արդարեւ, համեմատա-
կան նուազումի ենթարկուած են գրեթէ բոլոր երկիրներու
կրթական պիւտակները: Կրթական հաստատութիւնները, մա-
նաւանդ բարձրագոյն կրթութեան ուսումնարանները, հետըզ-
հետէ կը վերածուին հաստատութեան տնտեսական ձեռնարկու-
թիւններու: Յստակօրէն կը հետապնդուի «առանց ուղեղի՝
առողջ մարմին» քաղաքականութիւն մը: «Առողջ մարմին»,
որպէսզի սպառող միւսերը կարելի եղածին չափ երկար ժա-
մանակ այդպիսին մնայ: «Առանց ուղեղի», որպէսզի բթա-
ցած ըլլայ անհատի քննադատական ունակութիւնը եւ ան
զրկուի հարցադրումներ կատարելու իր կարողութենէն:
Բնական է, այս քաղաքականութեան քարոզչութիւնը կը կա-
տարուի ծայրագոյն հրապոյրով եւ անառարկելի գրաւչու-
թեամբ: Թակարդները լարուած են ամէնուրեք՝ տունը, փո-
ղոցը, աշխատատեղին, դպրոցը, հեռատեսիլի պաստառնե-
րուն վրայ, մարզադաշտին վրայ, հագուստեղէններու վրայ.
այնքան պակասած է անհատի քննադատական կարողութեան
աստիճանը, որ ան, օրինակ, որակաւոր հագուստը հագուե-
լով, իր ինքնասիրութիւնը շոյուած կարծած միջոցին, անգի-
տակցաբար կը կատարէ իր արժէքէն շատ աւելի սուղ վճար-
ւած ապրանքին քարոզչութիւնը՝ սատարելով անոր յաւելեալ
տարածման:

Համաշխարհայնացումը անխուսափելի երեւոյթ է, սա-
կայն ներկայիս գործադրութեան մէջ դրուած անոր տարբե-
րակը կ'առաջնորդէ դէպի քանդում: Այս կացութեան մատ-
նանշումը, առանձինն, ի հարկ է, իր հետ անմիջական լուծու-
մը չի բերեր: Մենք եւ մեզի հետ մեր նոր սերունդը պարտաւոր

ենք ապրելու այս աշխարհին մէջ,
քանի զայն փոփոխութեան ենթար-
կելու միջոցները մեր ձեռքը չեն:
Ատիկա չի նշանակեր սակայն, թէ
պէտք է ձեռնուռնայ մնալ: Անհրա-
ժեշտ է գաղափարներով զինել երի-
տասարդութիւնը, որպէսզի ան աւե-
լի զգոյշ վերաբերում ունենայ իր
անհատականութիւնն ու ինքնուրոյ-
նութիւնը քանդող քաղաքականու-
թեան հանդէպ, որովհետեւ անհատ-
ներու քանդումը ինքնաբերաբար
կ'առաջնորդէ հաւաքականութեան
քանդումին:

Այստեղ է ահաւասիկ, որ մեր
միտթիւնները ընելիք ունին, իւրա-
քանչիւրը առանձին եւ իրարու հետ գործակցելով: Մեր երի-
տասարդութեան ներկայի վտանգներուն դէմ գաղափարա-
կան պատուաստումը մեր հաւաքականութեան վերապրե-
լիութեան համար նոյնքան կենսական է, որքան մեր ջամբած
ազգային դաստիարակութիւնը: Նշենք այստեղ, որ ազգային
դաստիարակութեան մատուցումը հայկական անկախ պե-
տութեան գոյութեամբ անհամեմատօրէն դիւրացած է ըլլա՛յ
հայրենիքէն ներս, ըլլա՛յ սփիւռքեան գաղութներէն ներս:
Առանց հրաժարելու ազգային դաստիարակութենէն, մեր
կրթական ու դաստիարակչական ծրագիրները պէտք է կեդ-
րոնացնել երիտասարդութեան հոգեկան, մտային ու ֆիզի-
քական առողջութիւնը վտանգող երեւոյթներու վնասագործ-
ման նպաստող դաստիարակչական միջոցներուն վրայ:

Այս մարզին մէջ մենք արդէն ուշացած ենք: Երիտասար-
դութեան համար հրապուրիչ է փոփոխութիւնը, նորու-
թիւնը, տարօրինակը, արտասովորը, իսկ մենք մեր բացար-
ձակ մեծամասնութեամբ կը յամառինք իրեն հրամցել հինը,
դասականը, աւանդականը, արդէն ընդունուածը: Մեր կար-
ծիքով ազգային իմաստով առողջ քաղաքականութիւնը այս
երկու մօտեցումներուն համադրումն է եւ իմաստուն կենակ-
ցութիւնը, այսինքն՝ աշխարհի արագ ընթացքին հետ քայլ
պահելով հանդերձ՝ պահպանել ազգային ինքնուրոյնութիւնը
ցոլացնող հիմնական արժէքները: Ահա այսքան պարզ է
Հ.Մ.Լ.Մ.ի եւ Համազգայինի հասարակաց նպատակը, նոյն-
քան ալ դժուար իրագործելի, սակայն երբեք անկարելի:

Մօտաւորապէս երեք տարիներ առաջ տեղի ունեցաւ ՀՕ-
Մի, Հ.Մ.Լ.Մ.ի եւ Համազգայինի միացեալ խորհրդաժողովը,
որուն ընթացքին կատարուեցան կարեւոր խորհրդածութիւն-
ներ: Այդ խորհրդաժողովին միջնորտը պէտք է տարածուի՝
ամրանալով մեր բոլոր միտթիւնականներու միտքերուն մէջ,
որպէսզի հայութեան կեանքէն ներս գրեթէ երկու տասնամ-
եակ առաջ տեղի ունեցած հիմնական փոփոխութիւնները
իրենց արտայայտութիւնը գտնեն յանձնառու անհատներու
առօրեայ կեանքին մէջ եւ որպէսզի անոնցմէ իւրաքանչիւրը
վերածուի ճիշդ ուղղութիւնը ցոյց տուող փարոսի:

Յաջողութիւն կը մարդթեմ Հ.Մ.Լ.Մ.ի Ձրդ Պատգամաւոր-
րական ժողովին:

Ի ՄԻ ԳԱ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻԼ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՄԲ ՆՈՐՈԳՈՒԻԼ

(Հ.Մ.Ա.Կ.Ի ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՅՐԴ ԺՈՂՈՎԻՆ ԱՌԻԹՈՎ)



Իրանում աշխատող Հայ Մշակութային Արարատ Կազմակերպության Կենտրոնական Վարչությունն ու բոլոր անդամների կողմից ողջունում ենք Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական Ցրդ Ընդհանուր Ժողովի կայացումը եւ մեր շնորհակալութիւնը յայտնում Պատգամաւորական Ժողովին ներկայ գտնուելու Կեդրոնական Վարչութեանս յղուած հրաւերի համար:

Պատգամաւորական Ժողովները հաշուառութեան եւ հաշվետուութեան ժողովներ լինելուց բացի, առաւել՝ միմիանց հետ շփուելու եւ յարաբերուելու յարմար առիթներ են հայութեան հաւաքական կեանքի ու հայութիւնը յուզող հարցերի մասին միասին խորհելու, միասին ծրագրելու եւ համագործակցելու առումով, եւ մենք կը փորձենք ոչ միայն որպէս Հ.Մ.Ա.Կ., այլ որպէս իրանահայ գաղութի մի մասնիկ, մեր եւ իրանում աշխատող քոյր միութիւնների տեսակէտների փոխանցողը եւ թարգմանը հանդիսանալ:

Իրանի երեք թեմերի հայաշատ քաղաքներում աշխատում են 20ից աւել մարզամշակութային, ուսանողական-համալսարանական, բարեսիրական, հայրենակցական, կանանց եւ այլ միութիւններ, որոնց խոշորագոյնն է Արարատ Կազմակերպութիւնը՝ շուրջ 1800 անդամներով եւ Թեհրանում ու Իրանի հայաշատ չորս կենտրոններում (Թաւրիզ, Ուրմիա, Գեարգաբադ գիւղ եւ Շիրազ) ունեցած մասնաճիւղերով: Հ.Մ.Ա.Կ.ը, ի տարբերութիւն Հ.Մ.Ը.Մ.Ի, մարզական եւ սկստական աշխատանքների կողքին ծաւալում է նաեւ մշակութային գործունէութիւն: Մէկ սենեակից բաղկացած իր կեդրոնատեղիով գործունէութիւն սկսած մեր միութիւնը անցնող 63 տարիներում կարողացել է արձանագրել չօչափելի վերելք՝ շնորհիւ իր անդամների նուիրական եւ հետեւողական աշխատանքի ու միութեան շուրջ բոլորուած համայնքի լայն խաւերի բարոյական եւ նիւթական աջակցութեան: Այսօր, Արարատ Կազմակերպութիւնը Թեհրանի իր երկու կեդրոնատեղիներով «Կոմիտաս» արուեստի սրահով ու 73.000 քառ. մեթր տարողութեամբ Արարատ Մարզաւանով անփոխարինելի դեր ունի նոր սերունդների հայեցի դաստիարակութեան գործում: Արարատ Մարզաւանը իր մարզամշակութային դահլիճներով, մարզական դաշտերով եւ լայն հնարաւորութիւններով եզակի կառույց է ոչ միայն իրանահայութեան մօտ, այլ՝ ամբողջ Սփիւռքում:

Թեհրանի հայահոծ քաղաքամասերում աշխատող եւ Հ.Մ.Ա.Կ.ին գաղափարակից մարզամշակութային քոյր միութիւններից պիտի նշել Հ.Մ. Սիփան Միութեան, Հ.Մ. Նայիրի

Միութեանը եւ Հ.Մ. Սարգարապատ Միութեանը, որոնք եւս իրենց հնարաւորութեան սահմաններում լծուել են մեր գերագոյն նպատակների կենսագործման ճամբին:

Սիրելի քոյրեր եւ եղբայրներ, Միշտ սերտ են եղել գաղափարակից երկու քոյր միութիւններ՝ Հ.Մ.Ա.Կ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի յարաբերութիւնները եւ մենք միշտ զգացել ենք Հ.Մ.Ը.Մ.Ի ջերմ վերաբերմունքը մեր նկատմամբ: Այդ վերաբերմունքի ապացոյցներից են եղել Հ.Մ.Ը.Մ.Ի յղած հրաւերները Հ.Մ.Ա.Կ.ին՝ մասնակցելու համար համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական եւ սկստական միջոցառումներին: Մեզ համար մեծ պատիւ էր որ անցեալ Յունւարին՝ Հ.Մ.Ա.Կ.ի 22րդ Պատգամաւորական Ժողովին Թեհրանում հիւրընկալեցինք Հ.Մ.Ը.Մ.Ի Կենտրոնական Վարչութեան եղբայրներ Գառնիկ Մկրտչեանին ու Պատրիկ Կիւրպէնկեանին, որոնք մօտից ծանօթացան մեր գաղութի եւ Հ.Մ.Ա.Կ.ի հետ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը Հայաստանի առաջին անկախ հանրապետութեան ժամանակ որպէս պետական կազմակերպութիւն, եւ այնուհետ՝ Հայաստանի խորհրդայնացումից ու հալածուելուց յետոյ Սփիւռքի բոլոր գաղթօժախներում մեծ եւ նշանակալի դեր է ունեցել Հայ սերունդների գաղափարական, Ֆիզիքական դաստիարակութեան ու հայրենիքից հեռու ափերում հասակ առնող նորագոյն սերունդների հայկական նկարագրի կերտման, պահպանման ու զարգացման գործում: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ եւ Հայաստանի երկրորդ անկախ հանրապետութեան ստեղծման առաջին իսկ օրերից Հ.Մ.Ը.Մ.ը վերընձիւղուեց մայր հայրենիքում եւ այսօր իր առաջ բացուած է գործունէութեան մի ընդարձակ եւ լայն դաշտ մայր հայրենիքում յատկապէս, ու Սփիւռքի հայահոծ բոլոր գաղութներում միաժամանակ:

Այսօր, երբ հայաշխարհը դիմադրաւոր է բազմապիսի մարտահրաւերներ ու դժուարութիւններ, իսկ իրանահայ գաղութը վերջերս թափ առած արտագաղթի պատճառով նօսրանում ու թուի անկում է ունենում, առաւել քան երբեք կարելի է ստանում մեր շարքերը խտացնելու, մէկտեղուելու, ի մի գալու եւ կազմակերպուելու, երիտասարդութեամբ նորոգուելու, մտային-գաղափարական աւելի մեծ պաշարով զինուելու եւ հզօրանալու հանգամանքը:

ՄՐՏԻ ԽՕՍՔ՝ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՁ

Ժողովի մը փակումէն ետք կարելի՞ է օրակարգ շարունակել, թերեւս, պէտք է փորձել:

Հակահանոնազարային չէ առաջարկը, այլ միացում Հ.Մ.Ը.Մ-ի բարոյական անգիր օրէնքներուն եւ ասանդուլթիւններուն, որոնց շարանը շատ ալ աննշան չէ, իսկ անոր փոխանցումը՝ փորձառութեան, շփումի, ապրումի հետ առնչուած կը մնայ: Ուրեմն, կա՞մ կարելի է ընկալել եւ կամ՝ մնալով կրաւորական, յաճախ տեղեակ իսկ չըլլալ անոնց գոյութենէն, որ ինքնին արժանիք է մը զրկուած ըլլալու զգացումը կրնայ տալ զայն ճանչցողներուն:

Արդ, Պատգամաւորական Ժողովներու աւարտին, օրակարգի կէտերուն մէջ տեղ չգտած, սակայն փնտռուած իր կարգը ունի Սրտի Խօսքը:

Ժողովը աւարտած է իր աշխատանքները, որ անշուշտ ունի կազմակերպչական նշանակութիւն: Տրուած են որոշումներ, ուսումնասիրուած են ծրագիրներ, մասնակիցները փոխանցած են իրենցմէ սպասուածը՝ միութենական լրջախոհութիւն, չինիչ առաջարկներ ու մղիչ ուժ դարձող տեսլականներ:

Հոն՝ միութեան մասնաճիւղեր իրենց մարմիններու ճամբով հաշուետու դարձած են իրենց կատարած աշխատանքներուն, նաեւ՝ իրաւատէր քննելու եւ բարեփոխելու կատարուածը:

Քառամեայ գործունէութեան որոշումներ, հեռանկարային աշխատանք՝ մարզականի կողքին ու անկէ անդին ու դուրս ազգային մտահոգութիւններ, հայապահպանում, գործեւածեւ, այս բոլորը մարմին ստացած են արդէն:

Եւ հասած է աւարտը՝ Սրտի օսքը: Բայց ո՞վ կրնայ դիմադրել, վերջին օրերուն քակուած են լեզուներուն կապանքները, մօտ է բաժանումի պահը, վերջին ըսելիք մը, շնորհակալութեան արտայայտութիւն մը, կամ կրկնութեան գնով անվերջանալի ապրումներ գիրար կը հրմշտկեն, յանկարծ մոռցուած տող մը չմնայ, հարկն ու պատշաճը յարգուած ըլլայ...:

Որովհետեւ հոգեկան է անկէ ստացուած սնունդը, կորիզը գլխազիր Ոգին է, մնացեալը՝ վայելուչ ձեւն է, երեւոյթը:

Որովհետեւ Պատգամաւորական Ժողովը միախմբած է երէցը՝ իր շունչով, փորձառու ակնարկով ու ակնարկութիւն-



ներով, որոնք օր մը, տեղ մը հմայած էին երխասարդը: Հոն է նաեւ չափահասը իր հաւատարմութեամբ՝ նոյնիսկ երբեմն իր համոզումը ոտնակոխելով: Թեւ առած է ներողամտութիւնն ու ներումներու շղթան: Իսկ նորահասը՝ երախտագիտութեան արտայայտութիւն բաշխելու կողքին մեծնալու յոյս կը ներշնչէ:

Հ.Մ.Ը.Մ-ի Ծրդ Պատգամաւորական Ժողովին Գիր, Գնդակ ու Փողկապ մէկ տարազ հագած էին՝ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակը հայկական գլխարկով:

Նպատակ՝ հայապահպանում, հայրենիք, հայութիւնը յուզող ցաւեր, միջոցները՝ տարբեր:

Հոն չարտասանուած Սրտի օսք մըն ալ թերեւս այս՝ ուղղուած Հ.Մ.Ը.Մ-ին:

Հպարտ է ան որ անցած է Հ.Մ.Ը.Մ-ի շարքերէն, իսկ բախտաւոր է ան որ առիթը ունեցած է մասնակցելու անոր հաւաքական կեանքին, նոյնիսկ երբեմն ոչ-կատարեալ:

Հ.Մ.Ը.Մ-ը իր զաւակներուն տուած է իր ստացածէն աւելին, գէթ՝ շնորհակալութիւնը պէտք է վերադարձնել անոր, իբրեւ երախտիք:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- ♦ Եղբ. Ատոմ եւ քոյր Սելլա Թնճուկեաններ \$500
- ♦ Գեղամ Սիսեռեանի մահուան քառասունքին առիթով, Եղբ. Միհրան Շիմշիրեան \$50

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՏԵՍԻԼՔՈՎ, ՃԻԳԵՐՈՎ ԵՒ ԾՐԱԳՐՈՒՄՈՎ

Վարուժան Սերոբեան ՄՈՆԹՐԵԱԼ

33 տարիներ անցան այն օրերէն, երբ ՀՄԼՄ-ը օժտուեցաւ համազարուլթային կառոյցով: ՀՄԼՄ-ը կամուրջ նետեց աշխարհացրիւ մեր մասնաճիւղերուն միջեւ: 1974ը պատմական անկիրնադարձ մը եղաւ մարմնակրթական այս մեծ միութեան համար: Այդ օրերէն իրերայաջորդ ութ կեդրոնական Վարչութիւններ նոր թափով ու նոր հեռանկարներով համադրեցին միութեան ծրագիրները:

Եւ սակայն, անցնող 33 տարիներուն աշխարհի վիճակը փոխուեցաւ ու աննախընթաց կը փոխուի:

Անցնող 33 տարիներուն մեր պատմական գաղութներուն վիճակը փոխուեցաւ: Արմատացած ու կազմակերպ գաղութներ կորսնցուցին իրենց անցեալի կենսունակութիւնը: Նոր

տեսակի գաղթականութեան հետեւանք՝ նոր գաղութներ ստեղծուեցան:

Այս իրականութեան առջեւ ժամանակն է որ վերատեսուութեան ենթարկենք մեր աշխատանքի միջոցները, վերադասաւորենք ժողովական մեր կեանքը, քայլ պահենք օրուան նորաստեղծ պայմաններուն հետ: Անհրաժեշտ է, մեզմէ իւրաքանչիւրին ուսերուն վրայ կայ ծանր եւ լուրջ պարտականութիւն՝ ՀՄԼՄ-ի վաղը, ՀՄԼՄ-ի բարօքը ընթացքը ապահովելու համար: Այլ խօսքով՝ գալիք սերունդներուն կազմակերպ ձեւով ծառայելու համար:

Սփիւռքեան կեանքին մէջ երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնն է այսօր ՀՄԼՄ-ը, որ օրէ օր կը դիմադրուէ նոր մարտահրաւէրներ:

Գործենք միասին, հաւաքակա՛ն տեսիլքով, ճիգերով եւ ծրագրումով, որպէսզի բարձրանանք ու բարձրացնենք մեզի վստահուած երիտասարդ շարքերը:

*'Made from one single slice
of natural Australian opal'*



Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199

fax: +61 2 9262 1630

Website: www.classiquewatches.com

Email: Info@classiquewatches.com

ՀՆՕՐԵԱՅ ԵՒ ՄԵՐՕՐԵԱՅ Հ.Մ.Ը.Մ.

«ԾՕ՝... ԱՍՈՆՔ ԲՈՒՈՐԸ ՀԱՅ ԵՆ»

Պետրոս Յաճեան
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Երբ կը տեսնեմ մերօրեայ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները, որոնք կը հսկեն տօնախմբութեան մը կարգապահութեան, երբեմն կու գան եկեղեցի կամ պահակ կը կանգնին Ապրիլեան Յուշարձանին առջեւ, յուզումով կը վերջիչեմ հնօրեայ սկառուտական օրերու: Կը վերապրիմ այն խորագոյն յուզումը, զոր ես իբրեւ սկառուտ ունեցայ անձրեւոտ օր մը, Հալէպի քաղաքապետարանի մարզադաշտին մէջ, ձեմիլիէ թաղամաս, ամերիկեան երկրորդական վարժարանի մօտերը:



Վստահ եմ, այդ օր, միայն ես չէ որ ունեցայ այդ յուզումը, այլ սկառուտ բոլոր ընկերներս ինծի պէս դողդղացին իրենց ապշուածեան, երբ մարզադաշտի ստորին դռներէն ներս մտանք խմբովին ու մեր աչքերուն պարզուեցաւ խռովիչ համայնապատկեր մը:

Մարզադաշտին արեւելեան մասը բաց տարածութիւն մըն էր, ուր շինուած էին պահեստանոցներ, լուացարաններ եւ զգեստաւորուելու յատուկ սենեակներ՝ մարզիկներու համար, եւ ուր մենք իջեւանեցանք, պատրաստուելու համար օրւան տողանցքին: Այդ տարածութեան մէջ հարիւրաւոր սկառուտներ, գայլիկներ, կակուղ թաթիկներ, արծուիկներ ու մարզիկներ կը վխտային մեղուններու պէս: Խմբապետները կը վազվզէին ասդին-անդին, սկառուտական նուագախումբը փողերով ու թմբուկներով պատրաստութիւններ կը տեսնէր, արծուիկներ կակուղ թաթիկներու տաբատն ու փողկապը կը շտկէին: Վերջապէս գլխապտոյտ պատճառող շարժում մը կար եւ դէմքերու վրայ՝ ծանր, տպաւորիչ լրջութիւն մը:

Վարը՝ սկառուտներ, գայլիկներ, արծուիկներ, Գամիշլիէն, Արաբ Բունարէն, Ազգէն, Ռաքբայէն ու Տէր Զօրէն, Լաթաքիայէն, Հոմսէն ու Դամասկոսէն, Հասիչէն ու Թէյ Ապիա-տէն: Պէյրութէն ու Զահլէն, Թրիփոլիէն ու Այնճարէն:

Ահա նաեւ մենք՝ Ճարապլուսի խումբը:

Վարը, բաց տարածութեան մէջ, սկառուտներու հետ խառն ֆուլթպոլիստներ, աթլէթներ, պասքեթպոլիստներ, հեծելանւորներ, փինկ-փոնկի ու թենիսի մարզիկներ՝ կանաչ, դեղին, գծաւոր կամ բազմագոյն շապիկներով, բոլորն ալ զսպուած երջանկութեամբ, ջղայնոտ, շուարուն:

Իսկ դիմացը, Ֆուլթպոլի դաշտին հանդիպակաց կողմը՝ մարդիկ, մարդիկ՝ կիներ, երախաներ, ծերեր ու երիտասարդներ նստած, ոտքի կանգնած աստիճաններուն վրայ... ու անձրեւը, որ կը մաղուի խաղադօրէն, բարեկամաբար շոյելով բոլորին, բոլորին մագերը, ուսերը, սիրտերը...

ԾՕ՝... ասոնք բոլորը հա՞յ են, բացառանչեց Յովակիմի տղայ Գէորգը, երբ մենք՝ Ճարապլուսի սկառուտներս, մտանք այս բոլորին մէջ: Գէորգ ինձմէ պզտիկ էր ու խելօքիկ սկառուտ մը:

Հապա ի՞նչ կը կարծեցիր, դժուարութիւն, պատասխանեց մէկը, իբրեւ թէ իրեն համար անակնկալ մը չէր տեսարանը...

Գէորգը գիտէր անշուշտ, որ «ասոնք բոլորը հայ են», բայց այդ խօսքով ձեւը գտաւ արտայայտելու համար հրճուանքով ու հպարտութեամբ ալեկոծուած իր ներքինը, իսկ «դժուար լուր»ի հեղինակը՝ Պարսում, որ մեր երկուքէն մեծ եւ շքանշանակիր սկառուտ էր, այդ բառը գտաւ գնահատելու համար Գէորգին յուզումը...

Եւ իսկապէս տեսարանը ոչ միայն անակնկալ էր մեզի՝

գիւղաքաղաքի նեղ հորիզոնով կազմաւորուած պատանիներու համար, այլեւ սքանչելի էր, սրտայոյզ ու սրտապնդիչ: Մենք ուրիշ՝ ուր այսքան հայ պիտի տեսնէինք մեր գիւղաքաղաքին մէջ:

Զատիկ էր, եւ անձրեւին տակ համբերութեամբ թրջուող «այս բոլոր հայերը» եկած էին ներկայ ըլլալու Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի միջ-մասնաճիւղային մրցումները եզրափակող տողանցքին:

Քիչ յետոյ, հազարաւոր այս մարզիկներն ու սկաուտները բոլորակի պիտի դառնան դաշտը եզերող վազքուղիէն: Առջեւէն Հալէպի Փանֆարը, այնուհետեւ բոլոր խումբերը: Ուշադրութիւն, ճարապուստի խումբին ամէնէն ետեւը, մինակուկ կը քայլ սկսուտ մը. Պետրոս Հաճեանն է, կոնակին ճերմակ պայուսակ մը՝ վրան կարմիր խաչ դժուած եւ դեղամիջոցներով լեցուն: Թող գիտնայ հանդիսատես ժողովուրդը, որ ան իր սկաուտ ընկերներուն առողջապահութեան պատասխանատունն է, լրջօրէն տոբթոր, իսկ իրմէ անմիջապէս առաջ՝ գայլիկները: Առջեւէն կը քայլեն խմբապետ Խաչիկ Թաշճեանը եւ փոխ խմբապետ Սարգիս Թաթոյեանը:

Զմոռնանք պատուի առնել, երբ խումբը կ'անցնի կիսովին ծածկուած թրիպիւնին առջեւէն, ուր նստած կ'ըլլան նահանգապետը, պայծառանուն ու վեհաշուք Զարեհ Սրբազանը, օրւան թագուհին եւ պատուոյ օրիորդները, դեկավարներ, մեծեր եւ անպայման դուրսէն ժամանած նշանաւոր հիւր մը: Սիմոն Վրացեա՞նը արդեօք, Յակոբ Օշակա՞նը, Հրանդ Սամուէ՞լը, Դրօ՞ն, Ճորճ Մարտիկեա՞նը... ո՞վ արդեօք...

Դժբախտաբար չեմ յիշեր տարին ու թուականը: Ո՛չ ալ այդ օրը ես ի վիճակի պիտի ըլլայի անդրադառնալու, թէ ո՞վ է, ի՞նչ ըրած է վերը յիշուած անուններէն իւրաքանչիւրը: Բայց անոնցմէ մէկն ու մէկը անպայման ներկայ եղած է այս հոյակապ հայացոյցին...

Ես կը յիշեմ սկաուտ ընկերներով ճարապուստէն մեր ժամանելը Հալէպ: Սկաուտ ընկերներ, որոնցմէ իւրաքանչիւրը ո՞ւր է, ի՞նչպէս է, ի՞նչ կ'ընէ, չեմ գիտեր, վստահ եմ սակայն, որ անպայման Հ.Մ.Ը.Մ.ի փշուր մը կը մնայ սրտին խորը եւ անպայման պիտի վերապրի այդ պահը, եթէ պատահի որ կարդայ այս տողերը: Պիտի վերապրի ու անպայման յուզուի, եւ յուզուի աւելի՛ քան իրական այդ օրը, ինչպէս այս պահուս ես: Այժմ սակայն լրացնեմ դաշտին ամբողջ շարժումը:

Տողանցքէն առաջ ժողովուրդը կը դիտէ Հ.Մ.Ը.Մ. Հալէպ-Պէյրուսթ ֆութպոլի մրցումը: Հալէպի մարզիկները ճերմակ շապիկներով ու բաց-կապոյտ տաբատներով, իսկ պէյրուսթցիները՝ նարնջագոյն շապիկով եւ... (տաբատին գոյնը

չեմ յիշեր): Հալէպցի ժողովուրդը սրտատրոփ կը հետեւի խաղին: Հալէպը ունի Վազգէն եւ Արսէն Տէր Ղուկասեան եղբայրները, Արմէն Աբգարեանը, ունի Ալեքսանն (Փլլաւճեան) ու Համազասպը (Արզումանեան): Վազգէնը թեթեւ, արագավազ, գլխուն շրջանակի կապած ճերմակ թաշկինակ մը, եղնիկի պէս կը վազէ դաշտին մէջ, Համազասպը կող նշանակող ձախ ծայր է եւ Լեւոնը (Սարգիսեան) անանցանելի բերդապահ, բայց... պէյրուսթցիները քիչ անգամ թոյլ կու տան, որ բաժակը մնայ հալէպցիներուն: Պէյրուսթն ալ չէ քնացած, անոնք ալ Եղիշէ Մանուկեան ունին, Հաճի Հայկ ունին, սարսափելի Վարդիպաուր (Յովհաննէսեան), Կարապետ Սաաթճեանը ունին... Ժողէֆ Նալպանտեանը ունին:

Գանք հիմա մեր Հալէպ ժամանելուն, մեծ մասով առաջին անգամ ըլլալով:

Աղմուկով, երգելով ու ճուռողելով Հալէպ հասանք Հինգշաբթի երեկոյ մը, եւ մեզ բերող ինքնաշարժը կանգ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թիլէյի ակումբին առջեւ: Ի՞նչ ակումբ՝ մոտքի նեղ դուռ մը եւ ճիշդ դիմացը հսկայ սրահ մը, փակին կեդրոնը քանի մը թուփեր: Եւ աննկարագրելի եռուզեռ, գիրկընդխառնումներ, պոռչտուք, ուրախութեան բացազանչութիւններ, նոր ժամանողները դիմաւորող ժպտուն տղաք ու աղջիկներ, իրարանցում, տօն ու տօնախմբութիւն:

Միջ-մասնաճիւղային այս մրցումները այնպիսի գործնական ձեւով կազմակերպուած են, որ մէկ կողմէն խնայողութիւն ըլլայ եւ ապահովութիւն, եւ միւս կողմէն՝ մարզական մրցումներու շարքին ըլլայ նաեւ... հիւրամեծարութեան մրցում: Նման մրցումի մը ներկայ եղանք ես եւ Սարգիսը, ժամանան պահուն իսկ:

Ահա թէ ինչպէս: Բոլոր մարզիկները կը տեղաւորուին պանդոկներու մէջ, եւ կը ճաշեն ու կ'ընթրեն Թաւիլ Երեսուֆի Պրաթան Քլէպ գտնուող ճաշարան-սրճարանին մէջ, գիշերները յաղթական խումբերու աղմկալից խրախճանքներով ու պարտուողներու չքմեղանքի շարժուձեւերով: Իսկ սկաուտները, արծուիկները եւ կակուղ թաթիկները կը տեղաւորուին գիրենք հիւրասիրող ընտանիքներու մօտ:

Ճարապուստի բոլոր սկաուտները կարճ ժամանակի մէջ գացին գիրենք հիւրընկալող մարդոց հետ: Մնացած էինք ես եւ Սարգիս Պալապանեանը եւ կը սպասէինք, երբ երկու երիտասարդներ գրեթէ միաժամանակ հասան մեր քով եւ ուզեցին տանիլ մեզ, բայց երկուքն ալ կ'ուզէին միասնաբար տանիլ մեր երկուքը եւ տեղի չէին տար: Իրարու ձեռքէ կը քաշէին մեր պայուսակները, կը պաղատէին իրարու: Վէճ մըն է փրթաւ, մինչ մենք ապշած եւ անգօր դիտելու վրայ էինք ստեղծուած կացութիւնը (ինչ մեղքս պահեմ, մենք ալ կ'ուզէինք միասին ըլլալ նոյն տան մէջ), երբ աջ կողմի աստիճաններէն իջաւ բարձրահասակ մարդ մը եւ ուղղակի մօտեցաւ մեզի: Խստահայեաց մարդ մըն էր, վարի շրթունքը քիչ մը կծկուած եւ մագի խոպոպ մը ճակատին: Յոգնածի տեսք ունէր. - Ի՞նչ կ'ըլլայ կոր այստեղ նայինք... ըսաւ մարդը խստօրէն:

Երիտասարդները յարգալիք կեցուածք մը առին եւ բա-

USUՅԱՆՔ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՏԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
Հատոր Չորրորդ
(1991-2007)
Հեղինակ՝ Բիւզանդ Թորիկեան, տպագրութիւն՝
Կարպիս Գապասագալեան, Պէյրուսթ, 2007:

ցատրեցին վէճին պատճառը, սպասելով արդար դատավճիռը.
 - Մօ՛ դուք խելք չունի՞ք, ըսաւ մարդը բարկացած, բայց մտերմիկ շեշտով, երկու չօճուխ են, մէկը քեզի եւ մէկն ալ միւսին... հայտէ նայիմ: Չէ թէ կը սպասէք, քիչ յետոյ Ազէզի սկառուտները պիտի գան:

Յետոյ մեզի դառնալով.

- Ի՞նչպէս հասաք եաւրուս, Յակոբ Շգլանեանը եկա՞՞ ձեզի հետ, ըսաւ ու առանց պատասխանը սպասելու հեռացաւ արագօրէն:

Յակոբ Շգլանեանը մեր սկառուտ պատասխանատուներէն էր:

Ես չորս օր հիւր եղայ Նոր Գիւղ թաղամասի ընտանիքի մը երդիքին մէջ, եւ ի՛նչ երանութիւն, բաժնեկից եղայ հացի սեղաններու, որ Ճարապուլուսի մէջ երբեք չէի տեսած...

Հետագային, երբ ես ալ հալչպցի եղայ եւ սկսայ գործել հոն, մօտէն ծանօթացայ ու գործակից եղայ աստիճաններէն իջնող այդ բարձրահասակ, խստաբարոյ, խստահայեաց ու անժպիտ մարդուն, վարի շրթունքը քիչ մը պրկուած, ճակտին մագի փունջ մը. շարժուն, գործունեայ, կազմակերպող ու հրահանգող, վանողական թուացող բայց համակրելի: Ան կը կոչուէր Կարապետ Աղճայեան:

Վստահ եմ, Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը երախտագիտութեամբ կը յիշէ զինք:

Գալով զիս հիւրասիրող ընտանիքին, երբեք չկարողացայ գիտնալ անոնց մականունը, բայց տաքուկ յիշատակ մը

կը պահեմ իրենցմէ, իրենց հարագատի հիւրասիրութենէն ու գուրգուրանքէն: Հալչպի օրերուս յաճախ կ'անցնէի այն տան առջեւէն, ուր աւելի քան քսան տարի առաջ հիւր եղած էի Զատիկ մը ամբողջ: Երբեք չյանդգնեցայ դուռը ծեծել եւ ծանօթացնել ինքզինքս: Նոյն ընտանիքը մնացե՞ր էր արդեօք: Չեմ գիտեր:

Կը հաւատամ սակայն, Հ.Մ.Ը.Մ-ը գիտէ, որ իր մեծութիւնն ու վեհութիւնը կը պարտի այդ փոքր ու սրտբաց ընտանիքներուն:

Այս յօդուածը գրուած էր, երբ իմացայ, որ միջ-մասնաճիւղային աւանդական օրերը պիտի վերադառնան Հալչպի մէջ: Ուրախութիւնս կրկնակի պիտի ըլլայ, եթէ Հալչպի նոր Համագասպներն ու Վազգէնները թոյլ չտան, որ Պէյրուսի նոր Վարդիվառ Յովհաննէսեաններն ու Սարգիս Ազնաւորեանները... բաժակը քաղաքապետարանի դաշտէն ուղղակի տանին իրենց քաղաքը:

Բաժակը միշտ Հ.Մ.Ը.Մ-ին պիտի մնայ անշուշտ, բայց մեր տունը աւելի մօտ է, քան եղբօրս տունը: Յետոյ մէկ շաբթուան մէջ Նաւասարդեան դաշտ շինող Հալչպը ի՞նչպէս կրնայ հանդուրժել, որ իրմէ խլեն Նաւասարդի դափնիները...չէ՞ որ բաժակը նահանգապետին ձեռքէն ստանալը աւելի կարեւոր է, քան նոյնինքն բաժակը...

Խլուած բաժակ մը ուրիշ համ ունի...

Հալչպ եւ Պէյրուս, լա՛ւ յիշեցէք այս մէկը...

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
 Tastefully decorated 36 rooms
 and 6 suites with individual
 heating/air conditioning,
 direct access telephone line,
 internet connection, minibar,
 safety box and satellite TV.
 Private bathroom with hairdryer.
 The suites can accommodate
 3 adults or a family
 with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
 Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
 www.pavillon-monceau.com



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԼԱԲԱԳՈՅՆԸ

Սկառուտական շարժումի հիմնադրույթեան 100ամեակին նուիրուած բազմաթիւ նախաձեռնութիւններու շարքին, անցնող ամառ «Փոսթ Եուրոպի» նամակաբաշխական ընկերութիւնը կազմակերպեց սկառուտական լաւագոյն դրոշմաթուղթի մրցանք:

Մրցանքին իրենց մասնակցութիւնը բերին եւրոպական մեծաթիւ երկիրներէ նամակաբաշխական 50 ընկերութիւններ: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. մրցանքին մասնակցեցաւ Հայաստանի «Հայ փոսթ» ընկերութեան ճամբով եւ ի մեծ ուրախութիւն եւ հպարտութիւն՝ առաջնութեան

տիրոջը ապահովեց Հայաստանի: «Փոսթ Եուրոպի» վեց տարիէ ի վեր կը կազմակերպէ սկառուտական լաւագոյն դրոշմաթուղթի ընտրութեան մրցանք: Նախորդ տարիներուն մրցանակակիրներ դարձած են Մալթան, Մոնաքոն, Կրիւնլէնտը, Իսլանտան եւ Ուքրանիան: Լաւագոյն դրոշմաթուղթի ընտրութիւնը կը կատարուի համացանցի ճամբով քուէարկութեամբ: Այս իմաստով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան համացանցի յանձնախումբը անցնող ամիսներուն մեծ աշխատանք տարաւ՝ մղելով որ աշխարհասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականները մասնակցին քուէարկութեան: Տարուած աշխատանքը տուաւ իր ար-

դիւնքը եւ Վիեննայի մէջ գումարուած «Փոսթ Եուրոպի»ի տարեկան ընդհանուր ժողովին Հայաստան յաղթական հռչակեցաւ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցած դրոշմաթուղթին շնորհիւ:

«ՀԱՅ ՓՈՍԹ»Ի ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՑԱՅՏՆԷ

Նշանակալից այս յաղթանակին մասին խօսելով, «Հայ Փոսթ»ի ընդհանուր տնօրէն Հանս Պոլեն շնորհակալութիւն յայտնեց «Փոսթ Եուրոպի»ին, որ մրցանքը կազմակերպեց: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր անոնց, որոնք մասնակցեցան քուէարկութեան եւ իրենց ձայնը տուին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցած դրոշմաթուղթին: «Դրոշմաթուղթը կը խորհրդանշէ սկառուտական շարժումին յառաջացուցած միջազգային խաղաղութիւնը, ինչպէս նաեւ՝ հայկական եւ այլ մշակոյթներու միջեւ համերաշխութիւնը», ըսաւ Պոլեն:

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ

Յաղթական դրոշմաթուղթին շնորհանդէսը տեղի ունեցաւ 11 Հոկտեմբերին, «Հայ Փոսթ»ի կազմակերպած հնգօրեայ ցուցահանդէսին ընթացքին:



Ցուցահանդեսը նուիրուած էր նորանկախ Հայաստանի առաջին դրոշմաթուղթի 15ամեակին, իսկ ցուցահանդեսին բացումը՝ 9 Հոկտեմբերը կը զուգադիպէր Փոստի Միջազգային Օրուն:

Ցուցահանդեսին երրորդ օրը «Հայ Փոստ»-ի կողմէ յայտարարուած էր Հայաստանի Սկաուտական Շարժումի Օր: Այս առիթով կատարուեցաւ Եւրոպայի սկաուտական լաւագոյն դրոշմաթուղթի շնորհանդեսը, ներկայութեամբ՝ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի պատասխանատուներուն:

Շնորհանդեսին առընթեր ցուցադրուեցաւ սկաուտութեան պատմութիւնն ու առօրեան ներկայացնող տեսերիզ մը, որ ընդհանուր գիծերով ծանօթացուց սկաուտական շարժումի եւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի գործունէութեան գլխաւոր մարզերը: Նոյն առիթով տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի տիրացած մրցանակներու, հրատարակած ձեռնարկներու պոռչիւրներու եւ զանազան յուշանուէրներու ցուցահանդէս:


Շնորհանդեսին արտասանած իր խօսքին մէջ, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան շնորհաւորեց «Հայ Փոստ»-ը եւ Հ.Մ.Լ.Մ-ի ըսկաուտները իրենց յաղթանակին համար:

**ՓԱՓԱՔՈՂՆԵՐՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԹԻՒՈՎ
ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐ**

Սկաուտական շարժումի 100ամեակին նուիրուած դրոշմաթուղթէն սահմանափակ թիւով օրինակներ կարելի է գտնել Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի մօտ: Ապսպրանքներու համար կարելի է դիմել hask@scout.am ե-հասցէին եւ կամ հեռաձայնել 374-10-573614 թիւին: Վաճառման սակը ճշգրտած է հետեւեալ ձեւով: - Ստուարաթուղթ-յուշանուէր՝ չորս



դրոշմաթուղթ եւ երեք կնիք՝ \$25:
Առաջին օրուան ծրար, որմէ տրամադրելի է ընդամէնը ութ օրինակ՝ \$60:
Դրոշմաթուղթերու ամբողջութիւն (25 դրոշմաթուղթ)՝ \$50:
Կապոց՝ վերոնշեալ երեքը եւ մէկ ծրար՝ առաջին օրուան թուականով ներկայացուած՝ \$110:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europahotel.am

www.europahotel.am




ՀՄԸՄ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ իր շրջանի երկար տարիներու երազը վերջապէս իրականացած է եւ ՀՄԸՄ-ը օժտուած է սեփական բանակավայրով, Լոս Փատրէս ազգային անտառի (Los Padres National Forest) գեղեցիկ բնութեան ծոցին մէջ:
 Իւրաքայտուկ գեղեցիկութեամբ այս բանակավայրը



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՎ ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԴԻԱԿԱՆ ԲԱՎ

կը գտնուի Փինոս լեւան լանջին, Քալիֆորնիոյ Յրէյփըր գրօ-սայգիին մէջ: Բանակավայրը ամբողջ տարին տրամադրելի պիտի ըլլայ սկաուտական, մարզական եւ դաստիարակչական աշխատանքներու: 25 էյքըրը [չուրջ 100 հազար քառ. մեթր - «Մ.»] տարածութեամբ եւ ծառերով հարուստ այս տարածքը միայն 75 մղոն [120 քմ. - «Մ.»] հեռու է Կլէնտէյլէն: Բանակավայրը, իր յարմարութիւններով, լաւագոյնն է Հարաւային Քալիֆորնիոյ մէջ:
 Վրաններով օգտագործելի այս բանակավայրը ունի աշխատանքային լայն հնարաւորութիւններ. մեծ լողաւազան,





ձիերու յատուկ անկիւն, խարուկահանդէսի գեղեցիկ տարածք, վոլիպոլի դաշտ, ժողովատեղի, ընդարձակ կանգառ եւ գործածելի այլ տարածքներ:

Աւելին, բանակավայրը ունի բոլորովին նորոգուած ընդարձակ ճաշարան մը, ամբողջական գոյքերով եւ յարմարութիւններով խոհանոց, բանակավայրի պաշտօնէութեան բնակութեան առանձին բաժին, որոնք կարելի է օգտագործել նաեւ ձմեռնային բանակումներու համար: Բանակավայրը ունի նաեւ իր գրասենեակը, հոգատարի առանձին բնակարանը, աշխատանքներու յատուկ հսկայ վրան մը, օդասուն մեծ



տնակներ՝ իրենց զուգարաններով, ապահով պատուհաններ, երեկտրականութիւն, տաք ու պաղ ջուր, լուսցարաններ, շտեմարաններ եւ յարմարաւէտ այլ միջոցներ:

Թիքոյա բանակավայրը իր աւանդական բնոյթով բանակողը կը նոյնացնէ բնութեան հետ: Ան ունի չորս ենթաբանակավայրեր, որոնք ունին վրաններու յատուկ տախտակամածներ, որոնց վրայ դիւրութեամբ կարելի է լարել վրաններ: Իւրաքանչիւր ենթաբանակավայր ունի իր առանձին բաղնիքն ու



լուացարանը: Ենթաբանակավայրերը այնպիսի տարածու-
թեան մը վրայ կը գտնուին, որ կարելի է չորս խումբեր միա-
ժամանակ բանակումներ կատարեն եւ իրենց ծրագիրներն ու
աշխատանքները գործադրեն, առանց իրարու խանգարելու:

Հ.Մ.Ը.Մ-ի Թիքոյա բանակավայրը իր կառուցով կը յար-
մարի նաեւ հաշմանդամ կամ Ֆիզիքական սահմանափակ կա-
րող ու թիւններ ունեցող բանակողներուն: 25 էյքըր այս տա-
րածքը գրեթէ հարթ ու մատչելի հողատարածք է:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Ամերիկայի Միացեալ Նահանգնե-

րու շրջանը, իր խորհուրդներն ու յանձնախումբերը, մասնա-
ճիւղերը, անդամ-անդամուհիներն ու գորակցող համակիրնե-
րը հպարտ սեփականատէրերն են այս բանակավայրին, որ
անկիւնաքարն է շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի ապագայ կեանքին եւ
անհրաժեշտ միջոցը՝ իրականացնելու միութեան նպատակնե-
րը, առաջնորդելով երիտասարդութիւնը դէպի ճիշդ ուղին,
միաժամանակ զարգացնելով եւ սերմանելով անոնց մէջ բնու-
թեան սէր եւ դրական մօտեցում՝ ապագայի նկատմամբ:

With the compliments of

Restaurant Al-Mayass



ԱՍՏԻՃԱՆԱՒՈՐԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ

Լոռի Պարագեան Հայկան Չարմաքճեան ԱՌԵՆՔ

2 007-2008 տարեշրջանի սկսական տարեկան յայտագիրը պատրաստելու նպատակով, Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Սկսական Խորհուրդը երկօրեայ բանակում մը կազմակերպեց Այ Անտրէայի յունական արեւուշական բանակավայրին մէջ: Բանակումին մասնակցեցան 20 աստիճանաւորներ Աթէնքի եւ Գոքինիոյ սկսական մասնաճիւղերէն: Բանակումը տեղի ունեցաւ Շաբաթ 22 եւ Կիրակի 23 Սեպտեմբերին:

Երկու մասնաճիւղերու մը ջնիկներու, գայլիկ-արծուիկներու, սկսական արեւուշներու եւ երէց պարմանուհիներու խմբապետները զբաղեցան իրենց խմբաւորումներու սկսական յա-

ւաջիկայ տարեշրջանի յայտագիրով: Ապա, բոլոր աստիճանաւորները զրուցեցին իրենց յայտագիրներուն շուրջ եւ գաղափարներ ու փորձառութիւններ փոխանակեցին:

Մըջնիկներու յայտագիրը հիմնուած է ակումբին մէջ օգտակար եւ շինիչ ժամանակ անցընելու գաղափարին վրայ: Այս ծրագրին մօտեցումը կը հիմնուի այն առաջադրանքին վրայ, որ երբ մըջնիկները գայլիկ դառնան, անոնք ուղղակի շողուած ըլլան ակումբի մթնոլորտին ու միջավայրին:

Գայլիկներու յայտագիրը մասնաւորապէս պիտի կեդրոնանայ հայկական, սկսական եւ առօրեայ կեանքի ընդհանուր գիտելիքներու վրայ, աւելին, երգ ու ձեռային աշխատանք: Հիմնուած պիտի ըլլայ նաեւ ակումբէն դուրս գործունէութեան վրայ, ինչպէս՝ արշաւներ, պտոյտներ, թանգարաններու այցելութիւն եւ այլն:

Սկսականներու տարեկան ծրագիրը

հիմնուած պիտի ըլլայ բանակումներու, տարբեր մարզերու զիտութեան եւ գիտելիքներու վրայ, ինչպէս նաեւ՝ համաշխարհային եւ հայկական սկսականութիւն, աստղացոյց, հայոց պատմութիւն, Վարդանանց, արշաւներ եւ ձեռային զանազան աշխատանքներ:

Երէցներու ծրագիրը պիտի ընդգրկէ կողմնացոյցի, հայկական կուսակցութիւններու եւ միութիւններու վերաբերեալ, ինչպէս նաեւ՝ քաղաքական կեանքի, մարզական հարցերու եւ բանակումներու մասին նիւթեր: Բոլոր գիտելիքները պիտի խտացուին ու ամբողջանան յաւաքիկայ տարեշրջանի ամառային սկսական բանակումին:

Երկօրեայ բանակումին ընթացքին աստիճանաւորները զուգահեռաբար սորվեցան ազգային նոր երգեր: Բանակումին ճաշերը սիրայօժար ստանձնած էին պատրաստել Աթէնքի եւ Գոքինիոյ Սկսական Խորհուրդներու տիկիւնները:



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄ ` ՄԻՕՐԵԱՅ ԱՐՇԱԲՈՎ

Լոռի Պարագեան ԱՐԹԵՔ

Կիրակի, 7 Հոկտեմբերին տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի մասնաճիւղի սկաուտական 2007-2008 տարեշրջանի պաշտօնական բացումը, Շրջանային Սկաուտական Խորհուրդի նախաձեռնութեամբ, միօրեայ արշաւի մը կազմակերպումով: Արշաւին մասնակցեցան 65 մրջնիկներ, գայլիկ-արծուիկներ, սկաուտ-

արենոյներ, երէցներ եւ խմբապետներ Աթէնքի եւ Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղերէն:

Նախատեսուած արշաւին օրը, առաւօտեան ժամը 10ին, Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերն ու եղբայրները ժամանեցին Սխինօ Գորինիիս շրջանին մէջ գտնուող սկաուտական բանակավայրը եւ իրենց ծրագրային աշխատանքները յաջողութեամբ կատարելէ ետք, շրջանէն դէպի Աթէնք վերադարձան նոյն օրը երեկոյեան ժամը 5ին:

Միօրեայ արշաւին ընթացքին երկու մասնաճիւղերու անդամները զբաղեցան ձեռային զանազան աշխատանքներով, երգեցին հայկական ազգային եւ յունական սկաուտական երգեր, կատարեցին զանազան աշխոյժ խաղեր, որոնք աւիթը տուին սկաուտներուն իրենց մարմինը մարզելու, միտքը աշխատեցնելու, միաժամանակ վայելելու բնութիւնը, նկատի ունենալով մանաւանդ որ Սխինոյի բանակավայրը ծովուն շատ մօտ կը գտնուէր:

Կէսօրուան դադարին իւրաքանչիւր խմբաւորում շարունակեց իր աշխատանքային յայտագիրը: Արշաւը, որուն ներկայ գտնուեցան նաեւ Աթէնքի եւ Գոքինիոյ Սկաուտական Խորհուրդներէն քոյրեր, փակուեցաւ երեկոյեան, դրօշակի արարողութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԷՎՆԱՍՈՒԱԾ ՅՈՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄՕՑ



Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ

Անցնող ամիսներուն, Յունաստանի մէջ պատահած հրդեհներուն աղէտը շատ մեծ էր: Հող, տուներ, մարդիկ եւ անասուններ այրեցան: Շատեր անտուն եւ անօթի մնացին: Ստեղծուած այս դժուարին կացութեան դիմաց յոյն ժողովուրդը զանազան նախաձեռնութիւններով փորձեց օգտակար դառնալ աղէտեալներուն: Կացութեան դիմաց ստեղծուեցաւ անսպասելի կամաւորական շարժում մը, ժողովուրդին օգնութեան ձեռք երկարելու համար:

Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ (որ ուղղակի կապի մէջ մտաւ Յունաստանի սկաուտական ֆետերասիոնին հետ եւ կարգադրեց որ սկաուտ խմբապետները մասնակցին օգնութեան աշխատանքին) եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպութեամբ, մարդասիրական օժանդակութեան շարժման մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտութեան Աթէնքի եւ Գոքինիոյ խմբապետական կազմերը:

Ուրբաթ 7 Սեպտեմբերէն մինչեւ Կիրակի 9 Սեպտեմբեր, 15 սկաուտ աստիճանաւորներ գտնուեցան Պելոպոնէզի Իլիա նահանգի Զախարո քաղաքը: Հայ սկաուտները երեք օր անցուցին յոյն սկաուտներու, բանակայիններու եւ պարզ կամաւորներու հետ: Բոլորին նստաւայրը Զախարո քաղաքի սկաուտական բանակավայրն էր, ճիշդ ծովեզերքին մօտ:

Առաջին օրը, Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտները երբ բանակավայր հասան, ջերմ ընդունելութեան արժանացան յոյն սկաուտներու եւ կամաւորական խումբերու կողմէ: Կամաւորական խումբերը աղէտեալ շրջանը ժամանած էին Պելոպոնէզի զանազան շրջաններէն՝ Աթէնքէն, Սելանիկէն, Փաթրայէն, Կրետէ եւ Խիոս կղզիներէն: Բոլորը մէկ մարդու նման, ձեռք-ձեռքի տուած, Զախարոյի քաղաքապետարանին օգնութեամբ եւ պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, արտակարգ լրջութիւն կը ցուցաբերէին հրդեհներէ վնասուած ժողովուրդի օգնութեան գործին:

Օգնութեան խումբերը որոշած էին շրջանին մէջ մնալ 15 օր, իրենց անմիջական օժանդակութիւնը բերելու համար: Ինչ

կը վերաբերի կամաւորական խումբերուն՝ հիններուն հերթաբար կը փոխարինէին նոր ժամանողները:

8 Սեպտեմբերի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտները շրջանի պատասխանատուներուն յանձնեցին 6000 մեծ շիշի ջուրեր, որոնք դրկուած էին Հ.Մ.Ը.Մ.Ի կողմէ, յանձնուելու համար ժողովուրդին: Զուրերուն վրայ գետեղուած էր Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտութեան նշանը եւ հայ սկաուտներուն կողմէ յոյն ժողովուրդին տուեալ ընձեռումը բնորոշող արձանագրութիւն մը:

Զախարոյի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի աստիճանաւորները լարած էին վրաններ, որպէսզի անոնց մէջ տեղաւորուին հետզհետէ ժամանող կամաւորական խումբեր: Աստիճանաւորները յաջորդաբար այցելեցին շրջակայ Մաքիսթօ եւ Արթեմիտա գիւղերը, որոնք ահաւոր վնասներու ենթարկուած էին: Յաջորդ օր, առաւօտեան, կամաւորները ճամբայ ելան դէպի պատմական Ողիմպիա քաղաքը, ուր շրջապատի մաքրութիւնը կատարելէ ետք, ճաշեր բաժնեցին ժողովուրդին: Ապա, Հ.Մ.Ը.Մ.Ի աստիճանաւորները կէսօրուան ժամերուն բռնեցին վերադարձի ճամբան:

Բանակավայրին մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտները ծանօթացան յոյն սկաուտներու, որոնք շատ լաւ խօսքերով արտայայտուեցան հայերու մասին: Մասնաւորապէս Փաթրայի սկաուտութեան ընդհանուր խմբապետը, Փաթրայի բազմարուեստարանի դասախօս եւ յոյն սկաուտական կեդրոնական խորհուրդի անդամ Վիքթոր Սթիվանաքիս ըսաւ. «Նս հայերուն հետ մեծցած եմ Փաթրայի մէջ. միայն լաւ յիշատակներ ունիմ անոնցմէ: Հայերուն նուազագոյն շարժումն իսկ սուգի, ոճի մշակոյթ մը կը ցուցաբերէ: Շատ շնորհակալ ենք որ եկաք օգնելու: Զեր ներկայութիւնը հոս մեզի շատ օգտակար դարձաւ: Յուսամ որ մեր կապերը չեն խզուիր»:

Նման աշխատանքներու մասնակցելով Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտները օգտակար կը դառնան մարդկութեան եւ կը սորվին իրենց շուրջիներուն օգնել եւ գորակցիլ:

ՀԵԹԻԱԹ

ԵՐԵՔ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ

Կար ու չկար թագաւոր մը կար: Այս թագաւորին երկրին մէջ խենթ կին մը կար. այս կինը ունէր երեք մանչ. առաջինը երկրագործ էր, երկրորդը այգեպան, իսկ երրորդը՝ ջուհակ:

Տարի մը, թագաւորին երկրին մէջ սով կը տիրէ... սո՛վ, ինչ տեսակ սո՛վ...: Երկրի բոլոր բնակիչները կերակուր կը փնտռէին, բայց չէին գտներ: Օր մըն ալ, թագաւորին կովը կը կորսուի: Խենթ կնոջ տղաքը կը գտնեն զայն եւ տուն կը տանին, որպէսզի ուտեն: Գիտէին թէ իրենց մայրը խենթ է եւ թագաւորին լուր կրնայ տալ: Ուրեմն, հարսի հագուստներ կը հագցնեն իրենց մօր, կը տանին տան մէկ անկիւնը կը նստեցնեն եւ կ'ըսեն.

-Նանի, քեզ կրկին պիտի պսակենք. այս կովն ալ քու հարսանիքիդ պիտի մորթենք, որպէսզի ուտենք:

Կովը կը մորթեն, կը քերթեն, միսը կը խորովեն, կը լեցնեն կարասներուն մէջ եւ կը տանին ծածուկ տեղ մը կը պահեն, որպէսզի փնտռողները չգտնեն:

Թագաւորը իր ծառաները կը զրկէ կորսուած կովը փնտռելու համար: Ծառաները ճամբայ կ'իյնան, կը հանդիպին երկրագործ տղուն, որ վար ու ցանք կ'ընէր:



Ե Ղ Բ ա ' յ ր , - կը հարցնեն ծառաները, - կով տեսա՞ր այս կողմերը:

Չէ՞ք տեսներ որ հողը կը վարեմ, - կ'ըսէ երկրագործ տղան, ինքզինք խենթ ձեւացնելով:

Մենք քեզի կը հարցնենք՝ կով տեսա՞ր, դուն կ'ըսես՝ «կը վարեմ». մե՛նք ալ կը տեսնենք որ կը վարես. եթէ բան մը գիտես՝ ըսէ՛:

-Ո՛հ, օր կ'ըլլայ՝ քիչ կը վարեմ, օր կ'ըլլայ՝ շատ կը վարեմ:

-Կով կ'ըսեմ, կո՛վ՝ չորս ոտքով, երկու ականջով, հաստ վիզով:

-Հիմակուհիմա կը վարեմ. յետոյ պիտի ցանեմ եւ ջրեմ:

Թագաւորին ծառաները իրարու կ'ըսեն՝ «եղբա՛յր, աս խենթ է, երթանք միւս եղբօր մօտ, թերեւս ան մեզի կարգին պատասխան մը կու տայ»:

Կ'երթան այգեպան եղբօր մօտ: Կը տեսնեն որ ան պուպի թափ կու տայ, կը հարցնեն.

-Եղբա՛յր, կով տեսա՞ր այս կողմերը:

Կո՛յր էք, ի՞նչ էք, չէ՞ք տեսներ որ պուպք թափ կու տամ, - աս ալ ինքզինք խենթ կը ձեւացնէ:

-Թագաւորին կո՛վը կ'ըսեմ, թագաւորին կո՛վը. եթէ տեսեր ես, ըսէ՛ տեսեր եմ, թէ ո՛չ՝ վերջացաւ գնաց:

-Տարիներ կ'ըլլան, երբ հարիւր պուպքը մէկ ոսկիի կը ծախեմ, տարիներ ալ՝ երկու ոսկիի. կախում ունի տարիէն:

-Կո՛վ կ'ըսենք, կո՛վ, խո՛ւլ ես, ինչ է:

Ծառաները կը մտածեն թէ այս մէկը աւելի խենթ է՝ քան միւսը:

Կ'երթան ջուհակ եղբօր մօտ, կը հարցնեն.

-Եղբա՛յր, կով տեսա՞ր այս կողմերը:

-Ձեր աչքերը լաւ բացէք, լա՛ւ. չէ՞ք տեսներ՝ կտա՛ւ կը գործեմ, - աս ալ ինքզինք խենթ կը ձեւացնէ:

-Քեզի կո՛վ կը հարցնենք, իսկ դուն ուրիշ բան կ'ըսես:





-Այո, օր կ'ըլլայ մէկ ծրար կը գործեմ, օր կ'ըլլայ՝ նոյնիսկ կէս ծրար չեմ կրնար գործել: Ժամանակէն կախում ունի:

-Խե՞նթ ես, ի՞նչ է եղբայր: Մենք քեզի թագաւորին կովին մասին կը հարցնենք, դուն կտաւիդ մասին կը խօսիս:

-Եթէ ապրանքս աժան ծախեմ, ծրարը վեց ոսկիի կը ծախեմ, իսկ եթէ սուղ ծախեմ՝ ո՛ւրիշ ոսկիի:

Ծառաները կը մտածեն «այս մէկը միւսներէն աւելի խենթ կ'երեւի: Երթանք իրենց մօրը հարցնենք, թերեւս ան մեզի ճիշդ պատասխան մը տայ»:



Կ'երթան երեք եղբայրներու խենթ մօրը մօտ եւ կը հարցնեն թէ արդեօք թագաւորին կովը տեսե՞ր է:

-Այո՛, տեսեր եմ, տղաքս բերին, մորթեցին, խորովեցին, ահա այնտեղի կարասներուն մէջ ալ պահեցին:

-Ե՞րբ:

-Երբ ես դեռ նոր հարս էի: Թագաւորին ծառաները երբ կը տեսնեն որ այս կինը իր մանչերէն աւելի խենթ է,

կը ձգեն, կ'երթան թագաւորին լուր տալու, թէ իր կովը փնտուեցին, փնտուեցին, բայց հետքն անգամ չգտան...



շատ սուր է, իսկ հոտառութիւնը՝ շատ տկար: Եթէ փանտային ուտելիքը պահես, 10 վայրկեան կ'ուզէ զայն գտնելու համար: Փանտան բուսակեր կենդանի է. կ'ուտէ հնդեղէզ, եգիպտացորեն եւ բրինձ: Ան ջուրով խաղալ եւ ջուր խմել շատ կը սիրէ:

Փանտան արջի նման կենդանի մըն է, բայց արջ չէ: Ան կ'ապրի Չինաստանի հարաւ-արեւմուտքը, հնդեղէզներով (Bambou) լեցուն անտառներու մէջ: Փանտան առաջին անգամ գտնուած է 1913ին, Չինաստանի մէջ, եւ կը նկատուի հազուադէպ եւ շատ յարգի կենդանի մը:

Չինաստանի պետութիւնը երբ երկիր մը պիտի պատուէ կամ իր բարեկամութիւնը յայտնէ՝ փանտա մը կը նուիրէ:

Էգ փանտան 5 ամիս յղի մնալէ ետք կը ծննդաբերէ մէկ կամ երկու փան-

տա: Մինչեւ 3 տարեկան փոքրիկ փանտան չի հեռանար իր մօրմէն:

Փանտային աչքերը շատ փոքր կ'ըլլան եւ շուրջի սեւ մուշտակը աչքերը կը պաշտպանէ ձիւնէն: Անոր ականջը




ՀԱՆԵՒՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:

Երէկ ան չկար, իսկ վաղը պիտի չըլլայ: (Պատասխանը՝ յաջորդիլ:

Նախորդ հանելուկին պատասխանն էր ամպ):





Էր Հորժեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆՂԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կերդրոնական Վարչութեան որոշումով, շրջանէ մը. ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:
«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԳԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիելեան, Վահրամ Դանիելեան, Լեւոն եւ Թագուիի Փայեաններ, Պետօ եւ Սիրան Տեր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլեան, Յակոբ Թոքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթօ Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճեթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տետեան, Արթին Մաժակեան, Արա Իմամճեան, Պետրոս Պաքըրճեան, Բարգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան, Գառնիկ Նազարեթեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:

ՅՈՐԴԱՆԱԼԷՆ Ճորճ Տաքետեան:


www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

1. Գազաններու վանդակ - Եկամուտ:
2. Ծայրին թաց լաթ՝ փուռ մաքրելու ձող - Եղբրերգ:
3. Կծծի - Ձայնակից գիրեր - Քեսուռանի ծովահայեաց շրջաններէն:
4. Պսակագարդ - Լծորդութիւն:
5. Ձուկցերիացի թենիսովումըն:
6. Կարծրափայտ ծառ - Փորթուգալեան նախկին գաղթավայր՝ Հնդկաստանի մէջ:
7. Հայկական «մայր գետ» - Բովանդակ:
8. Ձայնանիչ - Տապալիի քար:
9. Անօդուտ, անշահ - Ոտնաչափ:
10. Այբուբենէն - Գուրգէն Աճէմեանի գրչանուրը - Շինուածք:
11. Սուր ծայր - Մօրեղբայր - Թնդանօթ:
12. Կայսերական հրովարտակ - Իգական օտար անուն - Ձայնանիչ:
13. Այբուբենէն (հակ.) - Լծորդութիւն - Շտեմարան:
14. Տաք ջուրով դարման - Թաքուն պայթուցիկ:
15. Գէորգ Էմինի երկերէն - Գիշատիչ թռչուն:
16. Առարկայ - Նախանձիլ - Լերան հարաւային կողմը:
17. Կրօնակից, հաւատակից - Տերեփուկ:
18. Թանձրամարմին կենդանի - Որոշուած գին - Անձուկ:
19. Ճակածան - Նուրբ ալիւր - Արգելական:
20. Մանր ճնճղուկ - Թումանեան գիւղին նախկին անունը:

ՈՒՂԱՀԱՅԵԱՑ

1. Կողոպուտ - 2000ի Ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Արատ:
2. Թթիւմոր - Սայլապան - Կոնաբեր ծառ:
3. Արեւելեան տիտղոս - Թագ - Էական բայէն - Մէկ բուռ:
4. Յրանսայի ֆուտպոլի ազգային խումբին խմբապետը - Փորթուգալցի բերդապահ:
5. Լերան կատար - Յրանսացի գրագէտ՝ Մարքիզ Տը (1740-1814) - Պտղատեսակ:
6. Գաղթող թռչուն - Ախորժ - Անձնական դերանուն - Ձայնանիչ:
7. Անուշաբոյր բոյս - Կատակ - Լուրդա Ասլանեանի գրչանունը:
8. Ածականակերտ մասնիկ - Հայաստանի քաղաքներէն - Յունական դիցարանի արեւու աստուածը - Քրիստոս հոն հարսնելոր էր:
9. Անդունդ - Կուռիլ, պայքարիլ - Անճարակ:
10. Առաջին անջրպետագնացը - Հայոց Ձ. ամիր - Տառի մը անունը:
11. Կրկնուած բաղաձայններ - Ս. Գրային նահապետ - Այբուբենէն - Հեղուկի ընդունարան - Ամօթ:
12. Սրղողիլ - Յովսէփ Էմինի ծննդավայրը - Ռամիօրէն՝ այո՛:
13. Միասին - Տարածքի միաւոր - Պարզ, անսեթեւեթ:
14. Գեղանկարիչ Արմենակ Միսիրեան - Ջօրաբաբէյի որդին - Դրան շրջանակ:
15. Ողբալ - Օժիտ - Յանկութենէն կատղիլ:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1		↻												
2														
3														
4														
5														↻
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														

ԹԻԻ 164 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1		Մ	Ե	Ս	Ր	Ո	Պ	Ա	Շ	Ո	Ի	Ն	Ջ	
2		Ա	Ր	Ա	Ց		Ա	Ր	Ո	Ի	Ո	Ո		
3		Ճ	Ա	Ն	Գ	Ր	Ի	Ի		Ա	Ի	Ր		
4			Գ	Ա	Ր	Լ	Ո	Ս	Մ	Ո	Ց	Ա		
5	Ա	Ս	Ի	Ա		Ա	Մ	Ա	Ն	Ս	Ա	Ո	Ր	Մ
6	Մ	Ա	Ն	Ր	Է		Ա	Ն	Ա	Թ	Տ	Գ	Ի	
7	Ա	Թ	Ի	Թ		Ո	Ց		Կ	Ը			Գ	
8	Ս	Ա	Ո	Ս	Տ		Պ	Լ	Է	Ր			Ա	
9	Ի	Ո	Ի	Տ	Վ	Ն	Ա	Ս					Մ	
10	Ա	Ս	Ո	Ր	Ե	Ս	Տ	Ա	Ն	Գ			Ա	
11		Ա		Ա	Ի	Օ		Կ	Ա	Շ	Ե	Գ	Ո	Ր
12	Գ	Լ	Ա	Բ		Ս	Պ	Ի		Ա	Ր	Ա	Ց	Ա
13	Տ	Ո	Ր				Տ	Ի	Տ	Ա	Ն	Փ	Փ	
14	Ա	Ր	Տ	Ա		Ո	Ս	Ա	Ն	Ի	Շ	Ի		
15	Կ	Ա	Հ			Մ	Ա	Ն		Լ	Ի	Մ	Ա	
16		Ե	Ի	Ա			Ա	Ն	Ա	Կ		Կ	Ն	
17	Ա	Ր	Մ	Մ		Ռ	Ո	Ն	Ա	Լ	Տ	Ի	Ն	Ի
18	Ի	Ջ	Ե	Թ	Ա	Լ		Լ	Ա	Մ	Ո	Լ		
19	Ա	Ր	Գ	Ա	Ր		Ո	Ք	Ա	Կ	Ա	Տ	Ի	Ր
20	Ջ	Ե	Ն		Գ	Ր	Ա	Ս	Տ	Ց	Ց	Կ	Ի	

